

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՈՐԾ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԵՐԵՎԱՆ 2012

Քարտեզագրություն և կադաստրային գործ

Ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Քարտեզագրություն և կադաստրային գործ 02500
2. Բուհը	Երևանի պետական համալսարան
3. Ծրագիրը հավաստարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	բակալավրի աստիճան
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2008/09
6. Ուսումնառության լեզուն	Հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության վկայական:

Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

9. Ծրագրի նպատակները

Ծրագիրը նպատակ ունի պատրաստել քարտեզագրության և կադաստրի բնագավառում միջառարկայական գիտելիքներով և հմտություններով օժտված մասնագետներ, որոնք ունակ կլինեն.

1. պատկերացում կկազմեն գեոդեզիայի, կադաստրային գործի և քարտեզագրության տեսական դրույթների և դրանք գործնականում կիրառելու մասին,
2. ունակ կլինեն ներդնել մասնագիտական գիտելիքները տնտեսության տարբեր ոլորտներում գեոդեզիական հանույթ և քարտեզագրում իրականացնելու համար,
3. հաշվառել, գնահատել և գրանցել անշարժ գույքը /հողամաս, շենք, շինություն, բնակարան, ոչ բնակելի տարածք/:
4. ծանոթ կլինեն ժամանակակից գեոդեզիական սարքավորումներին և կկարողանան կատարել կադաստրային հանույթ:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները	
Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը. Ա1. կտիրապետի գեոդեզիական ցանցերի ստեղծման ավանդական և նորագույն տեխնոլոգիաներին. Ա2. կտիրապետի գեոդեզիայի և քարտեզագրության տեսական և գործնական հիմնական դրույթներին, Ա3. կունենա դաշտային և լաբորատոր պայմաններում օգտագործվող ժամանակակից, գեոդեզիական սարքերի և սարքավորումների գործնական կիրառման իմացություն. Ա4. կտիրապետի անշարժ գույքի հաշվառման կադաստրային գնահատման և գրանցման աշխատանքներին. Ա5. կտիրապետի անշարժ գույքի կադաստրային գնահատման տնտեսական և իրավական նորմերին. Ա6. կտիրապետի աերոտիեզերական նկարների վերծանման տեսական դրույթներին և տեղանքի կադաստրային քարտեզագրման ժամանակ դրանց կիրառության մասին. Ա7. ծանոթ կլինի աշխարհատեղեկատվական և հողատեղեկատվական համակարգերի տեսական դրույթներին.	Դասավանդման/ուսումնառության մեթոդները Ուսանողները ձեռք են բերում Ա1-Ա7 կետերում նշված գիտելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով. Ա1, Ա2. - դասախոսություններ և սեմինար պարապմունքներ, - առաջադրանքներ ու խնդիրներ, - համացանցում առկա նպատակային նյութեր Ա3, - մասնակցություն դաշտային և լաբորատոր աշխատանքներին, - դաշտային պայմաններում կիրառվող սարքավորումների շահագործման ուղեցույցերի և հրահանգների միջոցով Ա4. - տարբեր հարցադրումներ և քննարկումներ, - լաբորատոր աշխատանքներ, - համացանցում առկա նպատակային նյութեր Ա5. Ա6 - դասախոսություններ և սեմինար պարապմունքներ, - գիտական սեմինար: Ա7 - դասախոսություններ, - լաբորատոր աշխատանքներ, - համացանցում առկա նյութեր Գնահատման մեթոդները Ուսանողների Ա1-Ա7 գիտելիքները և իմացությունը գնահատվում է հետևյալ ձևերով. Ա1, Ա2, Ա5. - ընթացիկ ստուգումներ և քննություններ. - առաջադրանքներ, - կուրսային աշխատանքներ - ավարտական աշխատանքի պաշտպանություն Ա3, Ա4. - առաջադրանքներ, - ուսումնական նախագծեր, - ստուգարքներ և քննություններ Ա6. - ընթացիկ ստուգումներ և քննություններ, - ավարտական աշխատանքի պաշտպանություն Ա7. - առաջադրանքներ, - ուսումնական նախագծեր, - ստուգարքներ:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի. Բ1. կատարել կադաստրային քարտեզագրման դաշտային հետազոտություններ ժամանակակից գեոդեզիական սարքավորումներով Բ2. համակարգելու և մշակելու ցանկացած բովանդակության, մասշտաբի և նշանակության քարտեզի կազման նախագիծ. Բ3. իրականացնելու անշարժ գույքի հաշվառման գնահատման և գրանցման աշխատանքներ, Բ4. համակարգչային ծրագրերի կիրառմամբ կազմել տարբեր բովանդակության քարտեզներ. Բ5. նախագծել և ստեղծել տարբեր բովանդակության աշխարհատեղեկատվական համակարգեր, Բ6. կադաստրային քարտեզագրման աշխատանքներում կիրառել հեռազննման տվյալները:	Դասավանդման/ուսումնառության մեթոդները Ուսանողները ձեռք են բերում Բ1-Բ6 կարողությունները հետևյալ մեթոդներով. Բ1, Բ2, Բ4, Բ5, Բ6 ▪ դասախոսություններով և լաբորատոր պարապմունքներով, ▪ գիտահետազոտական աշխատանքներում ուսանողի ներգրավմամբ, ▪ գիտահետազոտական պրակտիկայով: Բ3. ▪ անհատական առաջադրանքներով, ▪ գործնական և սեմինար պարապմունքների միջոցով, Գնահատման մեթոդները Ուսանողների Բ1-Բ6 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով. Բ1, Բ3. ▪ դասախոսություններ, ▪ ուսումնական պրակտիկա, ▪ արտադրական պրակտիկա. Բ2, Բ4. ▪ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ, ▪ առաջադրանքներ, ▪ արտադրական պրակտիկա. Բ5. Բ6. ▪ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ, ▪ ուսումնական պրակտիկա, ▪ համացանցում առկա նյութեր:
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ, գեոդեզիական կետերի կատալոգներ). Գ2. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները, Գ3. ստեղծագործաբար կիրառել ձեռքբերված գիտելիքները, ընկալել և տարածել նորերը. Գ4. արդյունավետորեն պլանավորել ժամանակն ու այլ ռեսուրսները. Գ5. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել	Դասավանդման/ուսումնառության մեթոդները Ուսանողները ձեռք են բերում Գ1-Գ6 ընդհանրական կարողությունները հետևյալ մեթոդներով. Գ1. ▪ Դասախոսություններ և գործնական պարապմունքներ, ▪ բանավոր ներկայացումներ: Գ2. ▪ դասախոսություններ, ▪ համացանցում առկա նյութեր: Գ3. Գ4. ▪ դասախոսություններ, ▪ գիտական սեմինար, ▪ ավարտական աշխատանքի պատրաստում: Գ5. Գ6. ▪ դասախոսություններ, ▪ գիտական սեմինար, ▪ ավարտական աշխատանքի պատրաստում:

գիտական բանավեճեր. Գ6. պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:	Գնահատման մեթոդները Ուսանողների Գ1-Գ6 ընդհանրական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով. Գ1-Գ6. ▪ ընթացիկ ստուգումներ և քննություններ, ▪ կուրսային աշխատանքներ, ▪ ավարտական աշխատանքի պաշտպանություն:
---	--

11. Ծրագրի կառուցվածքը
11.1. Ծրագրի ընդհանուր կառուցվածքի նկարագրությունը
Բակալավրի ծրագիրը բաղկացած է 5 հիմնական կրթամասերից՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (36 կրեդիտ աշխատածավալով), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, (8 կրեդիտ աշխատածավալով) ընդհանուր մասնագիտական (166 կրեդիտ աշխատածավալով), ինչպես նաև այլ կրթական մոդուլներ (30 կրեդիտ աշխատածավալով): 1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս <i>Պարտադիր դասընթացներ (32 կրեդիտ)</i> Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը: <i>Կամընտրական դասընթացներ (4 կրեդիտ)</i> Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը: 2. Ընդհանուր մաթեմատիկական և հումանիտար կրթամաս <i>Պարտադիր դասընթացներ (8 կրեդիտ)</i> Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը: 3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս (166 կրեդիտ) Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը (166 կրեդիտ): 4. Կրթական այլ մոդուլներ <i>Ուսումնական պրակտիկա (6 կրեդիտ)</i> Ապահովում է մասնագիտական ոլորտի կիրառական հիմնախնդիրների ընկալումը. կարող է իրականացվել ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում կատարվող գիտական թեմաների և նախագծերի շրջանակներում: ԵՊՀ-ից դուրս ուսանողական պրակտիկան կարող է անցկացվել ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի վարչական ստորաբաժանումներում, Քարտեզագրության և գեոդեզիայի կենտրոն ՊՈԱԿ-ում, Հողաշինարարության, անշարժ գույքի գնահատման և մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ-ում և կադաստրային քարտեզագրման մասնավոր

ընկերություններում: Կուրսային աշխատաքներ (4 կրեդիտ) Ծրագրի մասնագիտական հատվածում նախատեսվում է նաև 2-ական կրեդիտ աշխատաձևավորվող 2 կուրսային աշխատաքների կատարում: Արտադրական պրակտիկա (4 կրեդիտ) Գործնական աշխատանք է, որի նպատակն է բակալավրերի մոտ զարգացնելու գործնական հմտություններ, աշխատանքային պլանով աշխատելու կառուցվածություններ և այլն: Ամփոփիչ մասնագիտական ատեստավորում (4 կրեդիտ) Ավարտական աշխատանքի պաշտպանություն (12 կրեդիտ) Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է ամփոփ հետազոտություն ներկայացնել բակալավրի ավարտական աշխատանքի թեմայի շրջանակում:

11.2. Ուստարիներ և ուսումնական մոդուլներ		
1-ին ուստարի /1-2 կիսամյակներ/		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՄՈՒ- ԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս 1401. Հայոց լեզու և գրականություն -1 (2 կրեդիտ) 1401. Հայոց լեզու և գրականություն -2 (2 կրեդիտ) 1704. Ռուսաց լեզու -1 (4 կրեդիտ) 1704. Ռուսաց լեզու -2 (4 կրեդիտ) 1106. Հայոց պատմության հիմնահարցեր-1 (2 կրեդիտ) 1106. Հայոց պատմության հիմնահարցեր-2 (2 կրեդիտ) - Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ) Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս 2301. Համակարգչից օգտվելու հմտություններ (2 կրեդիտ) 0902. Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ (2 կրեդիտ) Ընդհանուր մասնագիտական կրթամաս 0101. Մաթեմատիկա – 1 (6 կրեդիտ) 0903. Երկրագիտություն (2 կրեդիտ) 0903. Տեղագրություն գեոդեզիայի հիմունքներով -2 (6 կրեդիտ) 0903. Կադաստրային գործի ներածություն (2 կրեդիտ) 0101. Մաթեմատիկա – 1 (6 կրեդիտ) 0903. Գեոինֆորմատիկա և գեոինֆորմացիոն քարտեզների ներածություն (4 կրեդիտ) 0903. Երկրաչափական նիվելիրացում (4 կրեդիտ) Կրթական այլ մոդուլներ Ուսումնական պրակտիկա (2 կրեդիտ)	- Օտար լեզու -1 /Անգլերեն, Ֆրանսերեն, կամ գերմաներեն/ (4 կրեդիտ) - Օտար լեզու -2 /Անգլերեն, Ֆրանսերեն, կամ գերմաներեն/ (4 կրեդիտ)	Առնվազն 60 կրեդիտի կուտակում:

Ուստարիներ և ուսումնական մոդուլներ

2-րդ ուստարի /3-4 կիսամյակներ/		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՄՈՒ-ԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս 1301.Փիլիսոփայության հիմունքներ(4 կրեդիտ) - Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ) - Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ) Ընդհանուր մասնագիտական կրթամաս 0410. Ֆիզիկա (4 կրեդիտ) 0903. Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով (2 կրեդիտ) 0903. Տախտետրիական հանույթ (5 կրեդիտ) 0903. Քարտեզագիտություն (5 կրեդիտ) 0903. ՀՀ քաղաքացիական իրավունք (4 կրեդիտ) 0903. Տվյալների հենք (4 կրեդիտ) 0903. Գեոմորֆոլոգիա երկրաբանության հիմունքներով (6 կրեդիտ) 0903. Թեոդոլիտային և մենզուլային հանույթ (7 կրեդիտ) 0903. Ինժեներային երկրաբանություն և գրունտագիտություն (4 կրեդիտ) 0903. Տնտեսագիտություն (3 կրեդիտ) Կրթական այլ մոդուլներ Ուսումնական պրակտիկա (4 կրեդիտ)	Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս - Լրացուցիչ լեզվական դասընթաց /Ռուսաց լեզու3 կամ օտար լեզու 3/ (4 կրեդիտ) 1202.Քաղաքագիտություն (2 կրեդիտ) 1901.Իրավագիտություն (2 կրեդիտ) <i>Կամ</i> 1107.Մշակութաբանություն (2 կրեդիտ) 2101.Կրոնների պատմություն (2 կրեդիտ)	Առնվազն 60 կրեդիտի կուտակում:

Ուստարիներ և ուսումնական մոդուլներ		
3-րդ ուստարի /5-6կիսամյակներ/		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՄՈՒ-ԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ
Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս 0002.Քաղաքացիական պաշտպանություն (2 կրեդիտ) 0002.Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն (2 կրեդիտ) Ընդհանուր մասնագիտական կրթամաս 0903. Քարտեզների նախագծում և կազմում (4 կրեդիտ) 0903.Քաղաքաշինություն և բնակավայրերի պլանավորում (3 կրեդիտ) 0903. Գեոէկոլոգիան կադաստրային գործում (5 կրեդիտ) 0903. Կառուցապատված տարածքների կադաստր (5 կրեդիտ) 0903. Հանքային ռեսուրսների կադաստր և մոնիթորինգ (5 կրեդիտ) 0903. ՀՀ աշխարհագրություն (6 կրեդիտ) 0903. Լաշաֆտագիտություն և լանդշաֆտային պլանավորում (4 կրեդիտ) 0903. Գեոդեզիական նշահարման աշխատանքներ (3 կրեդիտ) 0903. Անշարժ գույքի էկոնոմիկա և պլանավորում (4 կրեդիտ)		Առնվազն 60 կրեդիտի կուտակում:

0903. Բնական ռեսուրսների կադաստր և մոնիթորինգ (6 կրեդիտ) 0903. Լեռնային երկրների ինժեներաաշխարհագրական գնահատումը կադաստրի գործում (5 կրեդիտ) Կրթական այլ մոդուլներ Կուրսային աշխատանք (2 կրեդիտ) Արտադրական պրակտիկա (4 կրեդիտ)		
---	--	--

Ուստարիներ և ուսումնական մոդուլներ		
4-րդ ուստարի /7-8կիսամյակներ/		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ
Ընդհանուր մասնագիտական կրթամաս 0903. Քարտեզների ձևավորում և համակարգչային դիզայն (7 կրեդիտ) 0903. Կառույցների դեֆորմացիաների ուսումնասիրությունները գեոդեզիական եղանակով (7 կրեդիտ) 0903. Թվային քարտեզագրություն (6 կրեդիտ) 0903. Աշխարհագրական տեղեկատվական և հողատեղեկատվական համակարգեր (8 կրեդիտ) 0701. Բիզնեսի կազմակերպում և կառավարում (4 կրեդիտ) 0701. ՀՀ հողային կադաստրի իրավունք և իրավական կարգավորում (6 կրեդիտ) 0701. Տարածքի դիստանցիոն գոնորում (4 կրեդիտ) Կրթական այլ մոդուլներ - Կուրսային աշխատանք (2 կրեդիտ) - Ամփոփիչ ատեստավորում (4 կրեդիտ) - Ավարտական աշխատանք (12 կրեդիտ)		Առնվազն 240 կրեդիտի կուտակում Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորումն ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 15,00

11. 2. Պրակտիկայի հնարավորությունները և պայմանները Պրակտիկաները կազմակերպվում են պրակտիկայի ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող են իրականացվել ինչպես ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում կատարվող գիտական թեմաների և նախագծերի շրջանակներում, այնպես էլ ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի վարչական ստորաբաժանումներում, Քարտեզագրության և գեոդեզիայի կենտրոն ՊՈԱԿ-ում, Հողաշինարարության, անշարժ գույքի գնահատման և մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ-ում:	
11.3. Ավարտական ատեստավորումներ	
Ուստարի	Անվանումը
4-րդ ուստարի	Ավարտական ամփոփիչ ատեստավորում Բակալավրի ավարտական աշխատանքի պաշտպանություն

12. Ուսումնական պլանի քարտեզը
Կցված է

13. Տեղեկատվություն գնահատման կարգի վերաբերյալ

Տե՛ս «ԵՊՀ կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք», Երևան, 2011 թ., էջ 14-20:

14. Ապագա կարիերայի հնարավորությունները

«Քարտեզագրություն և կադաստրային գործ» ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում և նրա վարչական ստորաբաժանումներում, Քարտեզագրության և գեոդեզիայի կենտրոն ՊՈԱԿ-ում, Բնապահպանության նախարարությունում, Էկոլոգիայի և նոսֆերայի կենտրոնում, Արտակարգ իրավիճակների նախարարությունում, Հողաշինարարության, անշարժ գույքի գնահատման և մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ-ում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.

- ինժեներ - քարտեզագիր
- չափագրող - քարտեզագրող
- կրտսեր մասնագետ

Հնարավոր աշխատավայրերն են. ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն և նրա վարչական ստորաբաժանումները, Քարտեզագրության և գեոդեզիայի կենտրոն ՊՈԱԿ-ը, Հողաշինարարության, անշարժ գույքի գնահատման և մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ-ը, կադաստրային քարտեզագրման ոլորտում գործող մասնավոր ընկերությունները: Ստորև ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում կադաստրային գործին առնչվող որոշ մասնավոր ձեռնարկություններ և դրանց գործունեության ոլորտը.

- ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
 - Չափագրման և քարտեզագրման աշխատանքների իրականացում, անշարժ գույքի հաշվառում, գնահատում
- Քարտեզագրության և գեոդեզիայի կենտրոն ՊՈԱԿ
 - կադաստրային քարտեզագրման աշխատանքների իրականացում
- Հողաշինարարության, անշարժ գույքի գնահատման և մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ
 - Չափագրման և քարտեզագրման աշխատանքների իրականացում

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մագիստրատուրայում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ և ձևեր (եթե կան)

Ուսումնառության գործընթացում օգտագործվում են հետևյալ օժանդակ ռեսուրսները.

- Ժամանակակից սարքավորումներով և ծրագրային միջոցներով ապահովված լաբորատորիաներ,

- գրականության էլեկտրոնային ռեսուրսներ:

16. Համապատասխան կրթական չափորոշիչները կամ առարկայական կողմնորոշիչ(ներ)ը

- Պետական կրթական չափորոշիչ «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտությամբ.

17. Ծրագրային այլ կողմնորոշիչներ

1. Московский государственный университет геодезии и картографии
2. . Московский государственный университет по землеустройству

18. Լրացուցիչ տեղեկատվություն

1. Երևանի պետական ագրարային համալսարան
2. Երևանի պետական ճարտարագիտական համալսարան

Պետք է նկատի ունենալ, որ ծրագրի մասնագիրը տալիս է ծրագրի հիմնական բնութագրերի համառոտ նկարագրությունը և այն կրթական վերջնարդյունքները, որոնք ենթադրվում է, որ ձեռք կբերի միջին բնութագրական ուսանողը, եթե նա լիարժեք կերպով օգտվի ծրագրի ընձեռած ուսումնառության հնարավորություններից: Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել ԵՊՀ դասընթացների տեղեկագրքում:

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ	
Ա1	Ավանդական և նորագույն տեխնոլոգիաների միջոցով գեոդեզիական ցանցերի ստեղծման իմացություն:	Գ1	Տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ) օգտվելու կարողություն: և վերլուծելու հմտություն:
Ա2	Գեոդեզիայի և քարտեզագրության տեսական և գործնական հիմնական դրույթների իմացություն:	Գ2	Առկա խնդիրները ձևակերպելու, վերլուծելու և դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները գնահատելու կարողություն:
Ա3	Դաշտային և լաբորատոր պայմաններում օգտագործվող ժամանակակից, գեոդեզիական սարքերի և սարքավորումների գործնական կիրառման իմացություն:	Գ3	Ունեցած գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու, նոր գիտելիքներ ընկալելու և տարածելու կարողություն:
Ա4	Անշարժ գույքի հաշվառման, կադաստրային գնահատման և գրանցման աշխատանքների իմացություն:	Գ4	Ժամանակն ու այլ ռեսուրսներն արդյունավետորեն պլանավորելու կարողություն:
Ա5	Անշարժ գույքի կադաստրային գնահատման տնտեսական և իրավական նորմերի իմացություն:	Գ5	Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ բանավոր և գրավոր խոսքը կառուցելու կարողություններ:
Ա6	Աերոտիեզերական նկարների վերծանման տեսական դրույթների և տեղանքի կադաստրային քարտեզագրման ժամանակ դրանց կիրառության իմացություն:		
Ա7	Աշխարհատեղեկատվական և հողատեղեկատվական համակարգերի տեսական դրույթների իմացություն:	Գ6	Մասնագիտական էթիկայի նորմերը պահպանելու կարողություն:
Բ. Գործնական մասնագիտական կարողություններ			
Բ1	Ժամանակակից գեոդեզիական սարքավորումների միջոցով կադաստրային քարտեզագրման աշխատանքների կատարման կարողություն:	Բ3	Անշարժ գույքի հաշվառման, գնահատման և գրանցման աշխատանքներ իրականացնելու կարողություն:
Բ2	Ցանկացած բովանդակության, մասշտաբի և նշանակության քարտեզի նախագծի մշակման ունակություն:	Բ4	Համակարգչային ծրագրերի կիրառմամբ տարբեր բովանդակության քարտեզներ կազմելու կարողություն:
Բ5	Տարբեր բովանդակության աշխարհատեղեկատվական համակարգերի նախագծելու և ստեղծելու կարողություն:	Բ6	Կադաստրային քարտեզագրման աշխատանքներում հեռագնման տվյալների կիրառման կարողություն:

Ծրագրի կրթական վերջնարդյունքները															
Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6
Ուստարին, որի ավարտին կրթական վերջնարդյունքը ձեռք է բերվում բոլոր ուսանողների կողմից:															
1	2	3	4	4	3	4	3	2	4	2	4	3	4	1	

Կրթական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																		
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6
Պարտադիր կրթամաս																				
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԳԻՏԱՍԿԱՆ ԴԱՄԸՆԹԱՑՆԵՐ																				
Հայոց լեզու և գրականություն-1	1401/B1																		X	X
Ռուսաց լեզու-1	1704/B2																		X	X
Հայոց պատմության հիմնահարցեր-1	1106/B3														X		X		X	X
Հայոց լեզու և գրականություն-2	1401/B4																		X	X
Ռուսաց լեզու-2	1704/B5																		X	X
Հայոց պատմության հիմնահարցեր-2	1106/B6														X		X		X	X
Փիլիսոփայության հիմունքներ	1301/B7														X		X		X	X
Ֆիզդաստիարակություն	0001/B8																			
Կամընտրական դասընթացներ																				
Օտար լեզու-1	1602/B9																		X	X
Օտար լեզու-2	1602/B10																		X	X
Օտար լեզու-3	1704/B11																		X	X
Տնտեսագիտություն	1001/B12										X					X		X		

Կրթական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																			
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	
Իրավագիտություն	1901/B12					X														X	
Քաղաքագիտություն	1202/B12					X														X	
Մշակութաբանություն	1107/B13																			X	
Կրոնների պատմություն	2101/B13																			X	
ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ																					
Համակարգչից օգտվելու հմտություններ	2301/B1							X				X			X						
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	0901/B2	X				X	X														
Քաղաքացիական պաշտպանություն	0002/B3																				
Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	0002/B4																				
Ընդհանուր մասնագիտական դասընթացներ																					
Մաթեմատիկա-1	0101/B1							X					X		X						
Երկրագիտություն	0901/B2														X	X					
Տեղագրություն գեոդեզիայի հիմունքներով	0903/B3	X	X						X							X					
Կադաստրային գործի ներածություն	0903/B4		X		X						X										
Մաթեմատիկա-2	0101/B5							X					X		X						
Գեոինֆորմատիկա գեոինֆորմացիոն քարտեզագրության ներածություն	0903/B6							X					X				X				
Երկրաչափական նիվիլիրացում	0903/B7	X	X						X							X					
Ֆիզիկա	0410/B8																				

Կրթական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																			
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	
Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով	0903/B9				X						X					X					
Տախտետրիական հանույթ	0903/B10	X	X	X					X												
Քարտեզագրություն	0903/B11	X	X						X												
ՀՀ քաղաքացիական իրավունք	0903/B12					X					X				X	X					
Տվյալների հենք	0903/B13							X					X								
Գեոմորֆոլոգիա երկրաբանության հիմունքներով	0903/B14														X	X					
Թեոդոլիտային և մենզուլային հանույթ	0903/B15	X	X	X					X												
Ինժեներային երկրաբանություն և գրունտագիտություն	0903/B16				X										X	X					
Տնտեսագիտություն	0903/B17					X					X				X	X					
Քարտեզների նախագծում և կազմում	0903/B18	X	X				X			X											
Քաղաքաշինություն և բնակավայրերի պլանավորում	0903/B19				X						X				X	X					
Գեոէկոլոգիան կադաստրի գործում	0903/B20														X	X					
Կառուցապատված տարածքների կադաստր	0903/B21				X						X				X	X					
Հանքային ռեսուրսների կադաստր և մոնիթորինգ	0903/B22				X						X				X	X					
ՀՀ աշխարհագրություն	0903/B23														X	X					
Լանդշաֆտագիտություն և լանդշաֆտային պլանավորում	0903/B24														X		X				
Գեոդեզիական նշահարման աշխատանքներ	0903/B25	X	X	X					X												

Կրթական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																			
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	
Անշարժ գույքի էկոնոմիկա և պլանավորում	0903/B26				X						X						X				
Բնական ռեսուրսների կադաստր և մոնիթորինգ	0903/B27				X						X				X	X					
Լեռնային երկրների ինժեներաաշխարհագրական գնահատումը կադաստրային գործում	0903/B28				X						X				X	X					
Քարտեզների ձևավորում և համակարգչային դիզայն	0903/B29		X							X		X									
Կառույցների դեֆորմացիաների ուսումնասիրությունները գեոդեզիական եղանակով	0903/B30	X	X						X							X					
Թվային քարտեզագրություն	0903/B31		X					X				X	X		X						
Աշխարհագրական տեղեկատվական և հողատեղեկատվական համակարգեր	0903/B32		X					X				X	X		X						
Բիզնեսի կազմակերպում և կառավարում	0903/B33				X	X					X						X				
ՀՀ հողային կադաստրի իրավունք և իրավական կարգավորում	0903/B34				X	X					X						X				
Տարածքի դիստանցիոն զոնդում	0903/B34						X								X	X					
Կրթական այլ մոդուլներ																					
Ուսումնական պրակտիկա-1	0000			X					X	X	X				X	X	X				
Կուրսային աշխատանք-1	0000															X	X	X	X	X	
Ուսումնական պրակտիկա-2	0000			X					X	X	X				X	X	X				
Կուրսային աշխատանք-2	0000															X	X	X	X	X	

Կրթական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																			
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	
Ատաղքական պրակտիկա	0000			X					X	X	X				X	X	X		X		
Ամփոփիչ ատեստավորում	0000														X	X	X	X	X	X	
Ավարտական աշխատանք	0000		X		X		X					X			X	X	X	X	X	X	

ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՈՐԾ
ԲԱԿԱԼԱՎՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ

1703/B01	Ռուսաց լեզու-1	4 կրեդիտ
4 ժամ	0/64/0	
1-ին կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողի լեզվական գիտելիքները, ապահովել բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները՝ տարբեր լեզվական ոլորտներում հաղորդակցվելու համար:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
Գիտելիք և իմացություն		
• Կիմանա ծրագրով նախատեսված քերականական նյութը • Կիմանա ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները • Կտիրապետի տվյալ մասնագիտության հիմնական տերմիններին:		
Ունակ կլինի		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
• կառուցել բանավոր և գրավոր խոսք • վարել երկխոսություն • ընկալել և վերարտադրել կարդացած և ունկնդրած նյութի բովանդակությունը • թարգմանել մասնագիտական տեքստ ռուսերենից հայերեն:		
✓ (ընդհանրական կարողություններ)		
• ընթերցել ռուս դասականների ստեղծագործությունները բնագրով • պատկերացում կազմել ռուսերեն և հայերեն լեզուների ընդհանրությունների ու տարբերությունների մասին:		
Համառոտ բովանդակությունը		
Ռուսերենի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, ձայնավորների և բաղաձայների դասակարգումը, արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: Պատկերացում բառիմաստի մասին, բառային միավորների հարաբերակցության ձևերը: Ձևաբանության հիմնական միավորները		

(բառ, ձևույթ), խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Գոյականի հոլովման համակարգը, հոլովների նշանակությունը և գործածությունը: Շարահյուսական միավորները (բառակապակցություն, պարզ նախադասություն), նախադասության գլխավոր անդամները, նախադասության տեսակները ըստ կառուցվածքի (բայական և անվանական ստորոգյալ): Ուղղագրության հիմնական սկզբունքները:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգարքի անցկացման ձևը.

Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 գրավոր ստուգողական աշխատանք: Յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 20 միավոր: Դրական գնահատականներ ստանալու դեպքում ուսանողը համարվում է ստուգարքը հանձնած:

Ստուգողական աշխատանքների արդյունքներով ստուգարքը չհանձնած ուսանողների համար դասընթացի ավարտին կազմակերպվում է բանավոր հարցում:

Հիմնական գրականության ցանկը

1. **Русский язык.** Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004
2. **Хавронина С.А., Широценская А.И.** Русский язык в упражнениях. М., изд-во «Русский язык», 2005

1106/B0	Հայոց պատմության հիմնահարցեր 1	2 կրեդիտ
2 ժամ	24/8/0	
I կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ներկայացնել Հայոց պատմությունը հնագույն ժամանակներից մինչև Կիլիկիայի հայկական թագավորության անկումն ընկած ժամանակահատվածը, ծանոթացնել հայոց հնագույն, հին ու միջին դարերի պատմության առանցքային հիմնախնդիրներին, հայոց պետականության ժամանակափուլերին և հայ մշակույթի հիմնահարցերին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> ▪ ընդհանուր պատկերացում Հայոց պատմության առանցքային հիմնախնդիրների վերաբերյալ, ▪ հայոց պետականության ժամանակափուլերի առանձնահատկությունների մասին, ▪ ազատագրական պայքարի հերոսական էջերի մասին, <i>Ունակ կլինի.</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> ▪ գնահատել Հայոց պատմության դերը համաշխարհային պատմության հոլովությունում, ▪ ինքնուրույն մտածել և անհրաժեշտ դատողություններ անել Հայոց պատմության տարբեր հարցերի վերաբերյալ, ▪ անաչառ գնահատական տալ Հայոց պատմության տարբեր հիմնահարցերին և ազգային-պետական գործիչների գործունեությանը, ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i>		

- ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները,
- վերլուծել փաստերը և հետևություններ անել,
- զեկուցումներ պատրաստել ու գիտական բանավեճեր վարել:

Համառոտ բովանդակությունը

Հայոց պատմության նշված ժամանակահատվածի սկզբնաղբյուրները և ուսումնասիրությունները: Հայկական լեոնաշխարհը՝ հայերի բնօրրան: Հայ ժողովրդի ծագման հիմնահարցը: Վանի թագավորությունը: Երվանդականների թագավորությունները Ք.ա. 7-3 դդ.: Արտաշեսյանների Հայաստանը Ք.ա. 2-1 դդ.: Մեծ Հայքի Արշակունիների թագավորությունը 1-5-րդ դարի սկիզբ: Քրիստոնեության ընդունումը: Հայաստանը 5-7 դդ.: Արաբական նվաճումները և Հայաստանը: Բագրատունյաց Հայաստանը 9-11-րդ դդ.: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը օտար նվաճողների դեմ 11-12-րդ դարերում. Զաքարյանների իշխանությունը: Կիլիկիան Հայաստանը 11-14-րդ դդ.: Հայկական մշակույթը հին և միջին դարերում:

Գնահատման մեթոդները և չափանիշները

- Ստուգարքն անց է կացվում բանավոր հարցման ձևով:

Հիմնական գրականության ցանկը

1. Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Ս. Ս. Մելիք-Բախշյան, Երևան, 1975:
2. Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Պ. Հ. Հովհաննիսյան, Երևան, 2006:
3. Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա, հ. 1-ին, Երևան 2006:
4. Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա, հ. 2-րդ, Երևան 2011:

1401/B01	Հայոց լեզու և գրականություն-1	2 կրեդիտ
2 ժամ	8/24/0	
I կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի հնչյունական, բառային և քերականական առանձնահատկությունները, ոճագիտական հիմնական հասկացությունները, նպաստել խոսքի թերությունների վերացմանը, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> 1. ժամանակակից հայոց լեզվի հնչյունական և բառային առանձնահատկությունները մասին. 2. հայ հեղինակների /5-19-րդ դարեր/ գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործությունների վերաբերյալ. 3. մասնագիտական բառապաշարի, տերմինաբանության մասին <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) կատարելու լեզվական և գրականագիտական վերլուծություններ ✓ (ընդհանրական կարողություններ) գրական հայերենով կառուցելու բանավոր և գրավոր խոսք, շարադրելու մասնագիտական տեքստեր		
<i>Համառոտ բովանդակությունը</i> Պատմական համառոտ ակնարկ հայերենի զարգացման փուլերի մասին: Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում: Հնչյունաբանություն. հայերենի հնչյունական համակարգը: Շեշտ, վանկ, տողադարձ. հնչյունափոխություն: Հայերենի ուղղագրության սկզբունքները: Բառագիտություն. բառերի ձևափոխության խմբերը: Բառապաշար. Դասակարգման սկզբունքները. մասնագիտական բառա-		

պաշար. տերմիններ: Հայերենի բառակազմական միջոցները: Հայերենի գործառական ոճերը: 5-րդ դարի հայ պատմագրությունը: Հայ հին և միջնադարյան քնարերգությունը: Գրական երկերի վերլուծություն:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է ստուգարքային թելադրության դրական գնահատականի դեպքում՝ եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկը

1. Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզու /բուհական դասագիրք/, Երևան, 2009:
2. Սուքիասյան Ա. Ժամանակակից հայոց լեզու /հնչյունաբանություն, բառագիտություն/, Երևան, 1982:

1703/B02	Ռուսաց լեզու-2	4 կրեդիտ
4 ժամ	0/64/0	
2-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի տիրապետումը ռուսաց լեզվի համակարգին, զարգացնել նրա հաղորդակցական կարողությունները լեզվական տարբեր ոլորտներում, ապահովել տիրապետումը մասնագիտական լեզվին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
Գիտելիք և իմացություն		
• Կտիրապետի ռուսաց լեզվի քերականական կառուցվածքին • Կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինային համակարգին • Կիմանա մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները:		
Ունակ կլինի		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
• ընկալել և վերարտադրել մասնագիտական տեքստի բովանդակությունը • ինքնուրույն կազմել մասնագիտական բնույթի կապակցված տեքստ • թարգմանել մասնագիտական տեքստեր հայերենից ռուսերեն:		
✓ (ընդհանրական կարողություններ)		
• Ինքնուրույն կատարել ռուսերենի և այլ ուսումնասիրված լեզուների համակարգերի զուգադրական վերլուծություն:		
Համառոտ բովանդակությունը		
Ռուսերենի դարձվածները և դարձվածների դասակարգումը: Բառի ձևականական կազմը: Հիմնական բառակազմական միջոցները: Բայի քերականական կարգերը, բայի խնդրարությունը, դերբայ և դերբայական դարձված: Միակազմ նախադասություն, միակազմ նախադասության դասակարգումը: Մասնագիտական տեքստի կառուցվածքը, տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական		

կառուցվածքները: <i>Գնահատման մեթոդները և չափանիշները</i> Ստուգարքի անցկացման ձևը. Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 գրավոր ստուգողական աշխատանք: Յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 20 միավոր: Դրական գնահատականներ ստանալու դեպքում ուսանողը համարվում է ստուգարքը հանձնած: Ստուգողական աշխատանքների արդյունքներով ստուգարքը չհանձնած ուսանողների համար դասընթացի ավարտին կազմակերպվում է բանավոր հարցում: Քննության անցկացման ձևը. Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց. 1-ին և 2-րդ հարցերը՝ 6-ական միավոր, 3-րդ հարցը /մասնագիտական տեքստի թարգմանություն հայերենից ռուսերեն/՝ 8 միավոր:
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 3. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004 4. Хавронина С.А., Широценская А.И. Русский язык в упражнениях. М., изд-во «Русский язык», 2005

1401/B02	Հայոց լեզու և գրականություն-2	2 կրեդիտ
2 ժամ	8/24/0	
II կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերը, ձևաբանական և շարահյուսական ոճագիտության հիմնական հասկացությունները, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> 1. ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների մասին. 2. հայ հեղինակների /19-20-րդ դարեր/ գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործությունների վերաբերյալ. <i>Ունակ կլինի.</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> Ճիշտ կազմելու քերականական ձևերը, գործնականում կիրառելու ձևաբանական և շարահյուսական լեզվաոճական հնարները. ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> Կառուցելու և վարելու երկխոսություն և բանավեճ		
<i>Համառոտ բովանդակությունը</i> Ձևաբանություն. խոսքի մասերի դասակարգումը: Ժամանակակից հայերենի թեքվող խոսքի մասերը: Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը: Շարահյուսություն. կապակցման միջոցներ և եղանակներ. համաձայնությանն ու խնդրառությանը առնչվող սխալների վերացում: Պարզ նախադասություն: Բարդ նախադասություն. փոխակերպում և դերբայական դարձված: Ուղղակի և անուղղակի խոսք: Ժամանակակից հայերենի կետադրությունը: Ձևաբանական և շարահյուսական ոճաբանություն: Ճարտասանական հմտություններ. բանավեճի		

արվեստ. երկխոսության վարում և կառավարում: Հայ նոր գրականության սկզբնավորումը: 19-20-րդ դարերի հայ գրականությունը: Հայ նորագույն և արդի գրականություն: Գրական երկերի վերլուծություն:
<i>Գնահատման մեթոդները և չափանիշները.</i> Քննությունն անցկացվում է բանավոր, որից առաջ ուսանողները գրում են քննական թելադրություն (3 միավոր): Մնացած 17 միավորը բաշխվում է հետևյալ ձևով: Բանավոր քննության հարցատոմսը պարունակում է երկու տեսական հարց և մեկ գործնական առաջադրանք՝ համապատասխանաբար 6, 6, 5 միավոր արժեքով:
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզու /բուհական դասագիրք/, Երևան, 2009: 2. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու /ձևաբանություն/, Երևան, 2004:

1302/B 03	Փիլիսոփայության հիմունքներ	4 կրեդիտ
Շաբաթական 4 ժամ	(32/20/12)	
III կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել փիլիսոփայական գիտելիքի հիմնական առանձնահատկությունները, կառուցվածքը, հոգևոր մշակույթի համակարգում ունեցած դերն ու նշանակությունը, նրանց մոտ ձևավորել աշխարհայացքային հիմնախնդիրների վերլուծության և արժեքավորման կարողություններ, մասնագիտական գիտելիքների զարգացմանը նպաստող փիլիսոփայական-մեթոդաբանական մտածելակերպի և համակարգային մտածողության տարրեր:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <i>Գիտելիք և իմացություն</i> - փիլիսոփայության գործառույթների, փիլիսոփայական հիմնահարցերի և հասկացությունների, դրանց արժեքաբանական, աշխարհայացքային, մեթոդաբանական առանձնահատկությունների մասին, - համաշխարհային փիլիսոփայական մտքի զարգացման առանձնահատկությունների, փիլիսոփայական գիտելիքի և մեթոդների՝ ընդհանուր ճանաչողական և մասնավոր գիտությունների զարգացման գործում ունեցած նշանակության վերաբերյալ: <i>Ունակ կլինի.</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> - կատարել մասնավոր փաստերի ընդհանրացման-ընդհանուր սկզբունքների ձևակերպման և ընդհանուր դրույթների մասնավորեցման, կիրառման տրամաբանական գործողություններ, - քննարկվող հիմնահարցերի նակատմամբ դրսևորել համակարգային մոտեցում, դրանք վերլուծել համապատասխան տրամաբանական և ֆիզիկական համատեքստում:		

✓ (ընդհանրական կարողություններ) կկարողանա մասնագիտական հիմնախնդիրները վերլուծել մեթոդաբանական, աշխարհայացքային, գաղափարական տեսանկյուններից՝ դրսևորելով ստեղծագործական մոտեցման կարողություններ:
<i>Համառոտ բովանդակությունը</i> Փիլիսոփայության առարկան և հիմնական գործառույթները հոգևոր մշակույթի համակարգում: Փիլիսոփայական մտքի զարգացման հիմնական փուլերն ու առանձնահատկությունները: Կեցության էությունը և տիպաբանությունը: Շարժում և զարգացում: Զարգացման վերաբերյալ տարբեր հայեցակարգերի վերլուծությունը: Զարգացման չափանիշի հիմնահարցը: Համակարգայնություն: Համակարգերի էությունն ու տիպաբանությունը: Դետերմինիզմ և ինդետերմինիզմ, կոնդիցիոնալիզմ և մոնոկաուզալիզմ: Հոգևորի և դրա մակարդակների հիմնահարցը: Լեզու և մտածողություն: Աշխարհի ճանաչելիության հիմնահարցը: Ճանաչողության եղանակները: Իրացիոնալիզմ: Ճշմարտության վերաբերյալ փիլիսոփայական հայեցակարգերի վերլուծությունը: Ճշմարտության չափանիշի հիմնահարցը: Իմացության մեթոդների էությունն ու տիպաբանությունը: Գիտական և ստեղծագործական իմացություն: Մարդու հիմնահարցը: Հասարակական համակարգի և երևույթների մեկնաբանման տարբեր հայեցակարգերը: Հասարակական համակարգի կառուցվածքային և գործառույթային վերլուծությունը: Քաղաքացիական հասարակության գաղափարը և զարգացման հեռանկարները: Քաղաքակրթության զարգացման հիմնական միտումները:
<i>Գնահատման մեթոդները և չափանիշները.</i> եզրափակիչ բանավոր քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարցեր և թեստային առաջադրանքներ համապատասխանաբար՝ 5; 5; 4; 6 առավելագույն արժեքներով : Գնահատման քայլը 1 միավորն է:
<i>Հիմնական գրականության ցանկը</i>

- **Շաքարյան Հ.Գ.:** Փիլիսոփայություն: Ուսումնական ձեռնարկ: Երևան, 2005:
- **Ասատրյան Մ.Վ.:** Փիլիսոփայության ներածություն: Ուսումնական ձեռնարկ: Երևան, 2004:
- **Հովհաննիսյան Հ.Օ.:** Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները : Երևան, 2003:
- **Ջաքարյան Ս.Ա.:** Փիլիսոփայության պատմություն : Երևան, 2005:
- **Философия: учебник для вузов. Отв. ред. Кохановский В. П. Ростов - на-Дону, 1997, 1999.**

Լրացուցիչ գրականություն

1. **Հակոբյան Ս.Մ.:** Փիլիսոփայություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար: Երևան, 2005:
2. **фролов И. Т. и др. Введение в философию: учебное пособие для вузов. М., 2007.**
3. **Алексеев П. В., Панин А. В.** Философия: учебник для вузов. М., 1998.
4. **Спиркин А.Г.** Философия: учебник. М., 2001.

Բնութեանտալիս կայքեր

<http://www.philosophy.ru>

<http://anthropology.ru>

<http://www.iep.utm.edu>

1602/B01.	օտար լեզու -1 /անգլերեն/	4 կրեդիտ
4 ժամ	64/0/0	
I կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսուցանել մասնագիտական անգլերեն (Professional		

English) հումանիտար և սոց. գիտությունների ֆակուլտետներում, (ուսանողները հանձնել են անգլերեն լեզվի ընդունելության քննություն) ինչպես նաև ընդհանուր անգլերեն (General English) տեխնիկական և բնագիտական ֆակուլտետներում որտեղ ուսանողները չեն հանձնել անգլերեն լեզվից ընդունելության քննություն:

Դասընթացի ավարտին ուսանողը.

- կտիրապետի անգլերենի քերականության հիմնական դրույթներին և բառային ֆոնդին:
- կծանոթանա մասնագիտական անգլերենի գրավոր և բանավոր խոսքի հիմունքներին:

Համառոտ բովանդակությունը.

- Անգլերեն լեզվով մասնագիտական ընթերցանության հմտությունների ձևավորում:
- Մասնագիտական ընթերցանության տիրույթում գլխավոր և աջակցող մտքերի տարբերակում և ուսուցում:
- Հիմնական տերմինների ուսուցում:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

- Ստուգաթիվն անցկացվում է բանավոր հարցման ձևով անցած նյութի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկը.

1. S. Greenal, Move up (elementary) Macmillan Heinemann 2003
2. Liz and John Soars, Headway (elementary), Oxford
3. Y. Mkhitarian, Basic English 2008
4. R.Murphy, “English Grammar in Use” Oxford 2000
5. R.E.Arvidson, M.E.Bickford, “Geology”, GSA, 1990
6. David G. Armstrong, Francis K. Huntings, “World Geography” 1989

1608/B01.	օտար լեզու -1 /ֆրանսերեն/	4 կրեդիտ
4 ժամ	64/0/0	
I կիսամյակ	Ստուգաթք	
Դասընթացի նպատակն է ուսուցանել մասնագիտական ֆրանսերեն հումանիտար և սոց. գիտությունների ֆակուլտետներում, տեխնիկական և բնագիտական ֆակուլտետներում որտեղ ուսանողները չեն հանձնել ֆրանսերեն լեզվից ընդունելության քննություն:		
Դասընթացի ավարտին ուսանողը.		

- կտիրապետի ֆրանսերենի քերականության հիմնական դրույթներին և բառային ֆոնդին:
- կծանոթանա մասնագիտական ֆրանսերենի գրավոր և բանավոր խոսքի հիմունքներին:

Համառոտ բովանդակությունը.

- Ֆրանսերեն լեզվով մասնագիտական ընթերցանության հմտությունների ձևավորում:
- Մասնագիտական ընթերցանության տիրույթում գլխավոր և աջակցող մտքերի տարբերակում և ուսուցում:
- Հիմնական տերմինների ուսուցում:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

- Ստուգաբքն անցկացվում է բանավոր հարցման ձևով անցած նյութի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկը.

1. Попова И. Н. и др. – Французский язык, М. 2005
2. Communication progressive du français (niveau débutant), P. 1990

1604/B01	Օտար լեզու (գերմաներեն լեզու-1)	4 կրեդիտ
4 ժամ	0/ 64/0	
I կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	
Դասընթացի նպատակն է ուսանողին տալ ելակետային գիտելիքներ գերմաներենի հնչյունական, բառային և քերականական համակարգի մասին՝ այդպիսով ստեղծելով անհրաժեշտ հիմք լեզվի ուսումնասիրության հետագա		

փուլերի համար: Առանձին ուշադրություն է հատկացվում գերմաներենի արտասանական նորմերին, բառակազմական կաղապարներին և շարահյուսական կառույցների ձևավորմանը:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- գերմաներենի արտասանական նորմերի և հնչաբանական յուրահատկությունների մասին,
- ուսուցման տվյալ փուլում նախատեսված բառապաշարի մասին,
- անհրաժեշտ գիտելիքներ գերմաներենի ելակետային քերականական կառույցների մասին:

Ունակ կլինի.

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ճիշտ արտաբերել գերմաներենի առանձին հնչյունները և դրանց արտասանական տարբերակները,
- հասկանալ և խոսքում գործադրել այս փուլի համար անհրաժեշտ բառապաշարը,
- ձեռք բերած քերականական գիտելիքների հիման վրա կառուցել նախադասություններ և գործադրել դրանք խոսքում:

(ընդհանրական կարողություններ)

- ընկալել և մեկնաբանել գերմաներենի արտասանական յուրահատկությունները,
- կազմել գերմաներենին բնորոշ բառային կաղապարներ,
- վերլուծել գերմաներենի նախադասության կազմության սկզբունքները:

Համառոտ բովանդակությունը

Գերմաներենի արտասանական նորմերը: Արտասանություն և գրություն: Գրադարձություն և տառադարձություն: Քերականական կարգեր, դրանց արտահայտման միջոցները գերմաներենում: Գոյականի, ածականի և բայի ձևաբանական ու քերականական նշանակությունները: Գոյականի հոլովման տիպերը: Ածականի համեմատության աստիճանները: Բայի ձևաբանական տիպերը: Բայի խոնարհումը գերմաներենում: Պարզ նախադասության կառուցվածքը: Ուղիղ և շրջուն շարադասություն, դրանց առանձնահատկությունները: <ԸՆտանիք>, <Ուսում> և <Հանգստյան օր> թեմաների թեմատիկ բառապաշարը:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

- Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 9 միավոր:
- Ստուգումներից մեկը գրավոր է, իսկ մյուսը՝ բանավոր:
Յուրաքանչյուր ստուգում ներառում է 3 հարց, յուրաքանչյուրը 3 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայքայ 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

- 1.Kessler H., Levin V., Deutsch für Ausländer, Teil 1, Berlin, 1982.
2. Griesbach H., Schulz D., Deutsche Sprachlehre für Ausländer, Ismaning, 2004.
- 3.Gabrielyan J. u. A., Praktische deutsche Grammatik, Jerewan, 2008.
- 4.G. Helbig, J. Buscha, Deutsche Grammatik für Ausländer, Leipzig, 2001.

1602/B02.	օտար լեզու -2 /անգլերեն/	4 կրեդիտ
4 ժամ	64/0/0	

2-րդ կիսամյակ	Մտուցարք
Դասընթացի նպատակն է ուսուցանել մասնագիտական անգլերեն (Professional English) հումանիտար և սոցիոլոգիական գիտությունների ֆակուլտետներում ինչպես նաև տեխնիկական և բնագիտական ֆակուլտետներում ըստ անցումային ժամանակաշրջանի առանձնահատկությունների և պահանջների:	
Դասընթացի ավարտին ուսանողը. • ձեռք կբերի ունակություն ուսումնասիրել անգլերեն լեզվով մասնագիտական աղբյուրներ, • կկարողանա ընկալել և վերարտադրել իր մասնագիտական ոլորտին առնչվող գրականությունը:	
Համառոտ բովանդակությունը. • Հիմնական մասնագիտական տերմինները ուսումնասիրելու և կիրառելու ունակության զարգացում: • Մասնագիտական տեքստի հիմնական բովանդակության ընկալում և վերարտադրում: • Մասնագիտական գրավոր խոսքի հիմնական դրույթների	

Գնահատման մեթոդները և չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով անցած նյութի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկը

1. S. Sukiasyan, H. Grigoryan “English for GEO - students”, ԱՅԱՍ Պրինտ, Երևան 2012
2. Keith Kelly, “Geography”, Macmillan, 2009
3. R.E.Arvidson, M.E.Bickford, “Geology”, GSA, 1990
- 4 Edward R.Kolevzon, John A., “Our World and Its People” USA, 1977
5. S. Greenal, Move up (pre-intermediate) Macmillan Heinemann 2003
6. R.Murphy, “English Grammar in Use” Oxford 2000

1608/B02.	օտար լեզու -2 /ֆրանսերեն/	4 կրեդիտ
4 ժամ	64/0/0	
2-րդ կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսուցանել մասնագիտական ֆրանսերեն հումանիտար և սոցիոլոգիական գիտությունների ֆակուլտետներում ինչպես նաև տեխնիկական և բնագիտական ֆակուլտետներում ըստ անցումային ժամանակաշրջանի առանձնահատկությունների և պահանջների:		

Դասընթացի ավարտին ուսանողը. • ձեռք կբերի ունակություն ուսումնասիրել ֆրանսերեն լեզվով մասնագիտական աղբյուրներ, • կկարողանա ընկալել և վերարտադրել իր մասնագիտական ոլորտին առնչվող գրականությունը:
Համառոտ բովանդակությունը. • Հիմնական մասնագիտական տերմինները ուսումնասիրելու և կիրառելու ունակության զարգացում: • Մասնագիտական տեքստի հիմնական բովանդակության ընկալում և վերարտադրում: • Մասնագիտական գրավոր խոսքի հիմնական դրույթների
Գնահատման մեթոդները և չափանիշները. Ստուգաքնն անցկացվում է բանավոր հարցման ձևով անցած նյութի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկը

1. Попова И. Н. и др. – Французский язык, М. 2005
2. Grammaire progressive du français (niveau débutant), P. 2004

1604/B02	Օտար լեզու (գերմաներեն լեզու-2)	4 կրեդիտ
4 ժամ	0/ 64/0	
II կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	
Դասընթացի նպատակն է ուսանողին տալ ելակետային գիտելիքներ գերմաներենի հնչյունական, բառային և քերականական համակարգի մասին՝ այդպիսով ստեղծելով անհրաժեշտ հիմք լեզվի ուսումնասիրության հետագա փուլերի համար: Առանձին ուշադրություն է հատկացվում գերմաներենի արտասանական նորմերին, բառակազմական կաղապարներին և շարահյուսական կառույցների ձևավորմանը:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> ▪ գերմաներենի արտասանական նորմերի և հնչաբանական յուրահատկությունների մասին, ▪ ուսուցման տվյալ փուլում նախատեսված բառապաշարի մասին, ▪ անհրաժեշտ գիտելիքներ գերմաներենի ելակետային քերականական կառույցների մասին: <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) ▪ ճիշտ արտաբերել գերմաներենի առանձին հնչյունները և դրանց արտասանական տարբերակները, ▪ հասկանալ և խոսքում գործադրել այս փուլի համար անհրաժեշտ բառապաշարը, ▪ ձեռք բերած քերականական գիտելիքների հիման վրա կառուցել		

նախադասություններ և գործադրել դրանք խոսքում:

(ընդհանրական կարողություններ)

- ընկալել և մեկնաբանել գերմաներենի արտասանական յուրահատկությունները,
- կազմել գերմաներենին բնորոշ բառային կադապարներ,
- վերլուծել գերմաներենի նախադասության կազմության սկզբունքները:

Համառոտ բովանդակությունը

Գերմաներենի արտասանական նորմերը: Արտասանություն և գրություն: Գրադարձություն և տառադարձություն: Քերականական կարգեր, դրանց արտահայտման միջոցները գերմաներենում: Գոյականի, ածականի և բայի ձևաբանական ու քերականական նշանակությունները: Գոյականի հոլովման տիպերը: Ածականի համեմատության աստիճանները: Բայի ձևաբանական տիպերը: Բայի խոնարհումը գերմաներենում: Պարզ նախադասության կառուցվածքը: Ուղիղ և շրջուն շարադասություն, դրանց առանձնահատկությունները: <ԸՆտանիք>, <Ուսում> և <Հանգստյան օր> թեմաների թեմատիկ բառապաշարը:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

- Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 9 միավոր:
- Ստուգումներից մեկը գրավոր է, իսկ մյուսը՝ բանավոր:
Յուրաքանչյուր ստուգում ներառում է 3 հարց, յուրաքանչյուրը 3 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայքայը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

- 1.Kessler H., Levin V., Deutsch für Ausländer, Teil 1, Berlin, 1982.
2. Griesbach H., Schulz D., Deutsche Sprachlehre für Ausländer, Ismaning, 2004.
- 3.Gabrielyan J. u. A., Praktische deutsche Grammatik, Jerewan, 2008.
- 4.G. Helbig, J. Buscha, Deutsche Grammatik für Ausländer, Leipzig, 2001.

1703/B03	Ռուսաց լեզու	4 կրեդիտ
4 ժամ	0/64/0	
3-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է զարգացնել և խորացնել ուսանողի լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները, ապահովել նրա տիրապետումը մասնագիտական լեզվին և ազատ օգտվելը մասնագիտական գրականությունից:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
Գիտելիք և իմացություն		
• Կտիրապետի մասնագիտական տեքստի բառային, ձևաբանական և շարահյուսական միջոցներին • Կիմանա գիտական զեկույցների և ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքները • կիմանա ուղղագրության և կետադրության կանոնները:		
Ունակ կլինի		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
• ներկայացնել մասնագիտական տեքստի բովանդակությունը սեղմ և ընդարձակ • կազմել մասնագիտական տեքստի պլան, անոտացիա • գրել ռեֆերատ մասնագիտական թեմայով • մասնակցել գիտական քննարկումների:		
✓ (ընդհանրական կարողություններ)		
• հաղորդակցվել ռուսական մշակույթի ստեղծագործություններին • ինքնուրույն կատարել ռուսերենի և այլ ուսումնասիրված լեզուների համակարգերի գուգադրական վերլուծություն:		
Համառոտ բովանդակությունը		
Նախադասության տեսակները ըստ կառուցվածքի և հաղորդակցական		

ուղղվածության, բարդ նախադասություն, բարդ նախադասության դասակարգումը: Պարզ և բարդ նախադասությունների իմաստային համադրությունը (պարագայական իմաստների արտահայտությունը պարզ և բարդ նախադասություններում): Ռուսերենի գործառական ոճերը, լեզվի գիտական ոճ, գիտական կապակցված տեքստի կառուցման միջոցները՝ բառային, ձևաբանական և շարահյուսական: Ռուսերենի կետադրության հիմնական սկզբունքները: Գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրները: Գիտական զեկույցների և ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքները:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Քննության անցկացման ձևը.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց. 1-ին և 2-րդ հարցերը՝ 6-ական միավոր, 3-րդ հարցը /մասնագիտական տեքստի թարգմանություն հայերենից ռուսերեն/՝ 8 միավոր:

Հիմնական գրականության ցանկը

5. **Русский язык.** Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004

6. **Хавроница С.А., Широценская А.И.** Русский язык в упражнениях. М., изд-во «Русский язык», 2005

1602/B03.	օտար լեզու -3/անգլերեն/	4 կրեդիտ
4 ժամ	64/0/0	
3-րդ կիսամյակ	Քննություն	

Դասընթացի նպատակն է խորացված ուսուցանել նեղ մասնագիտական անգլերեն (Professional English), յուրաքանչյուր ֆակուլտետի առարկայական բովանդակության տիրություն:

Դասընթացի ավարտին ուսանողը .

- կտիրապետեն գիտական երկխոսության համար պահանջվող հիմնական մասնագիտական բառապաշարին և տերմիններին:
- կկարողանա ազատ զրույց վարել և քննարկել մասնագիտական ոլորտին առնչվող եմաների շուրջ:

Համառոտ բովանդակությունը.

- Մասնագիտական բանավոր խոսքի զարգացում:
- Մասնագիտական քննարկում կատարելու հմտությունների ուսուցում:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

Գիտելիքների ստուգումը անց է կացվում քննության ձևով:

- Առաջին առաջադրանք՝ կարդալ, թարգմանել անծանոթ տեքստը

մասնագիտական թեմայով

- **Երկրորդ առաջադրանք՝ մեկնաբանել ծանոթ մասնագիտական տեքստը**
- **Երրորդ առաջադրանք՝ խոսել մասնագիտական ոլորտի վերաբերյալ**

Հիմնական գրականության ցանկը.

1. S. Sukiasyan, H. Grigoryan “English for GEO - students”, ԱՅԱՍ Պրինտ, Երևան 2012
2. Keith Kelly, “Geography”, Macmillan, 2009
3. И.И.Бондаренко, “English for Students of Geology”. 1995
4. М.Васильева, “Comprehension Reading for the Students of Geology ”, Москва 2009
5. Colin.Barron, Ian Stewart, “Modular Science”, Longman, 1990
6. Martin Bates, “English for Science and Technology”, Longman 2009
7. Keith Kelly, “Vocabulary Practice Series”, Macmillan 2010
8. Liz and John Soars, Headway (intermediate), Oxford

1608/B03.	օտար լեզու -3 /ֆրանսերեն/	4 կրեդիտ
4 ժամ	64/0/0	
3-րդ կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է խորացված ուսուցանել նեղ մասնագիտական ֆրանսերեն, յուրաքանչյուր ֆակուլտետի առարկայական բովանդակության տիրույթում:		

Դասընթացի ավարտին ուսանողը .

- կտիրապետեն գիտական երկխոսության համար պահանջվող հիմնական մասնագիտական բառապաշարին և տերմիններին:
- կկարողանա ազատ զրույց վարել և քննարկել մասնագիտական ոլորտին առնչվող թեմաների շուրջ:

Համառոտ բովանդակությունը.

- Մասնագիտական բանավոր խոսքի զարգացում:
- Մասնագիտական քննարկում կատարելու հմտությունների ուսուցում:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

Գիտելիքների ստուգումը անց է կացվում քննության ձևով:

- Առաջին առաջադրանք՝ կարդալ, թարգմանել անծանոթ տեքստը մասնագիտական թեմայով
- Երկրորդ առաջադրանք՝ մեկնաբանել ծանոթ մասնագիտական տեքստը
- Երրորդ առաջադրանք՝ խոսել մասնագիտական ոլորտի վերաբերյալ

Հիմնական գրականության ցանկը.

1. H. Renner, U. Renner, G. Tempesta – La français de l'hôtellerie et de la restauration. Clé internationale, 1992
2. Claire Miguel – Vocabulaire progressif du français, P. 1999

1604/B03	Օտար լեզու (գերմաներեն լեզու-3)	4 կրեդիտ
4 ժամ	0/ 64/0	
III կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է ուսանողին տալ ելակետային գիտելիքներ գերմաներենի հնչյունական, բառային և քերականական համակարգի մասին՝ այդպիսով ստեղծելով անհրաժեշտ հիմք լեզվի ուսումնասիրության հետագա փուլերի համար: Առանձին ուշադրություն է հատկացվում գերմաներենի արտասանական նորմերին, բառակազմական կաղապարներին և շարահյուսական կառույցների ձևավորմանը:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> ▪ գերմաներենի արտասանական նորմերի և հնչաբանական յուրահատկությունների մասին, ▪ ուսուցման տվյալ փուլում նախատեսված բառապաշարի մասին, ▪ անհրաժեշտ գիտելիքներ գերմաներենի ելակետային քերականական կառույցների մասին: <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) ▪ ճիշտ արտաբերել գերմաներենի առանձին հնչյունները և դրանց արտասանական տարբերակները, ▪ հասկանալ և խոսքում գործադրել այս փուլի համար անհրաժեշտ բառապաշարը,		

▪ ձեռք բերած քերականական գիտելիքների հիման վրա կառուցել նախադասություններ և գործադրել դրանք խոսքում: <i>(ընդհանրական կարողություններ)</i> ▪ ընկալել և մեկնաբանել գերմաներենի արտասանական յուրահատկությունները, ▪ կազմել գերմաներենին բնորոշ բառային կադապարներ, ▪ վերլուծել գերմաներենի նախադասության կազմության սկզբունքները:
<i>Համառոտ բովանդակությունը</i> Գերմաներենի արտասանական նորմերը: Արտասանություն և գրություն: Գրադարձություն և տառադարձություն: Քերականական կարգեր, դրանց արտահայտման միջոցները գերմաներենում: Գոյականի, ածականի և բայի ձևաբանական ու քերականական նշանակությունները: Գոյականի հոլովման տիպերը: Ածականի համեմատության աստիճանները: Բայի ձևաբանական տիպերը: Բայի խոնարհումը գերմաներենում: Պարզ նախադասության կառուցվածքը: Ուղիղ և շրջուն շարադասություն, դրանց առանձնահատկությունները: <ԸՆտանիք>, <Ուսում> և <Հանգստյան օր> թեմաների թեմատիկ բառապաշարը:
<i>Գնահատման մեթոդները և չափանիշները.</i> ▪ Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով: Եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը համապատասխանաբար 2,1,1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1.Kessler H., Levin V., Deutsch für Ausländer, Teil 1, Berlin, 1982. 2. Griesbach H., Schulz D., Deutsche Sprachlehre für Ausländer, Ismaning, 2004. 3.Gabrielyan J. u. A., Praktische deutsche Grammatik, Jerewan, 2008. 4.G. Helbig, J. Buscha, Deutsche Grammatik für Ausländer, Leipzig, 2001.

1001/B15	Տնտեսագիտության հիմունքներ	(3 կրեդիտ)
2 ժամ	32/32/0	
I կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տնտեսագիտության ընդհանուր հիմունքներին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
Գիտելիք և իմացություն		
▪ հիմնական տնտեսագիտական հասկացությունների վերաբերյալ, ▪ արտադրողների և սպառողների վարքագծերի վերաբերյալ, ▪ տնտեսական մեխանիզմի գործունեության առանձնահատկությունների վերաբերյալ:		
Ունակ կլինի.		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
▪ հասկանալու իր մասնագիտության շրջանակներում առաջացող տնտեսագիտական տարատեսակ խնդիրները և միջոցներ ձեռնարկելու դրանց լուծման ուղղությամբ: ▪ վերլուծել երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունը և կանխատեսել դրա հավանական ազդեցությունը իր մասնագիտական գործունեության ոլորտի վրա:		
✓ (ընդհանրական կարողություններ)		
▪ վերլուծել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակներ:		
Համառոտ բովանդակությունը		
Թեմա 1՝ Պահանջարկի և առաջարկի առաձգականությունը: Թեմա 2՝ Սպառողի վարքի տեսության հիմունքները: Թեմա 3՝ Գործարար ձեռնարկությունները և արտադրողի վարքը: Թեմա 4՝ Արտադրության ծախքերի տեսություն: Թեմա 5՝ Մրցակցային և ոչ մրցակցային շուկաները: Թեմա 6՝ Մակրոտնտեսական ցուցանիշները: Ազգային հաշիվների համակարգը: Թեմա 7՝ Մակրոտնտեսական		

անկայունություն, տնտեսական ցիկլեր, գործազրկություն և ինֆլյացիա: Տնտեսական աճ: Թեմա 8՝ Ամբողջական պահանջարկ և ամբողջական առաջարկ: Թեմա 9՝ Վճարային հաշվեկշիռ և արժույթային կուրսեր:
<i>Գնահատման մեթոդները և չափանիշները</i> Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Աղաջանյան Հ.Բ., Միկրոէկոնոմիկա, Եր., 2010 2. К.Р.Макконнелл, С.Л.Брю, Флин, Экономикс, М. 2011,. 3. Курс экономической теории /под ред. Сидоровича, М.. 2009.

1202/B01.	Քաղաքագիտություն	2 կրեդիտ
2 ժամ		
IV կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքների, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթի հետ, ուսանողների մոտ ձևավորել քաղաքական իրականության վերլուծության գործնական հմտություններ:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
Գիտելիք և իմացություն		
• քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակություն ունեցող հիմնահարցերի մասին,		
Ունակ կլինի		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
• կունենա քաղաքագիտական վերլուծություններ կատարելու բավարար ունակություններ,		
• կկարողանա կողմնորոշվել գործնական քաղաքականության		

առանձնահատկությունների մեկնաբանման հարցերում,

✓ (ընդհանրական կարողություններ)

• պատկերացում կկազմի քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին:

Համառոտ բովանդակություն

Քաղաքագիտության ձևավորումը որպես գիտություն: Քաղաքագիտության օբյեկտը և առարկան: Քաղաքականության ծագումը և էությունը: Քաղաքական իշխանության էությունն, կառուցվածքը և լեգիտիմությունը: Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Քաղաքական կուսակցությունները և կուսակցական համակարգեր: Քաղաքական գործընթացներ: Ընտրություններ և ընտրական համակարգեր: Քաղաքական գաղափարախոսություններ: Քաղաքական էլիտա և լիդերություն:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

Հիմնական գրականության ցանկը

- Քաղաքագիտություն, ուսումնական ձեռնարկ, գլխ. խմբագիր՝ Հ. Մանուշարյան, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2006. - 588 էջ
- Ãäâæèââ Ê.Ñ. Îëèðîëîäëÿ: Ó÷âáíèè æëÿ âûñòèð ò÷âáíûð çââââáíèè. – Î.: Êîâîñ, 2004. – 488 ñ.
- Ñîëîâüââ Ä.Ë. Îëèðîëîäëÿ: Îëèðè÷âñèâÿ òâîðèÿ, îëèðè÷âñèèâ òâðîëèäè: Ó÷âáíèè æèâ ñòóââîðîâ âóçîâ / Ä.Ë. Ñîëîâüââ. – Î.: Äñîâèð Îðâîñ, 2003. – 559 ñ.
- Îëèðîëîäëÿ: ò÷âáíèè æëÿ ñòóââîðîâ âóçîâ / Îîâ ðââ. Ä.Î. Êââðèâíè. – 3-â èçâ., îâðâðââ. è âîñ. – Î.: ԲԻԵՕԵ-ԱՎԻԱ, 2006. – 591 ñ. – (Ñâðèÿ §Çîëîðèè òîîâ ðîññèéñèèð ò÷âáíèèâ|).
- Comparative Government and Politics, An Introduction, Rod Hague, Martin Harrop, New York.: PALGRAVE MACMILLAN,

1107/ B00	Մշակութաբանություն	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
III կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և մշակույթ հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, մշակութային գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն կդարձվի հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա մշակութային գործընթացների վրա: Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն.</i> • «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումների, մշակույթի առաջացման և զարգացման տեսությունների մասին, • մշակույթի կառուցվածքի, բաղադրիչների, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունների մասին, • համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունների վերաբերյալ: <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • ներկայացնել մշակույթի ընդհանրական բնութագիրը, նրա առանձին բաղադրիչներն ու դրսևորումները, • ճանաչել և զանազանել իրարից համաշխարհային մշակութային գործընթացի պատմական և լոկալ դրսևորումները, • հասկանալ մերօրյա մշակութային երևույթները և գործընթացները ✓ (ընդհանրական կարողություններ) ▪ ընկալել սեփական մասնագիտական գործունեությունը որպես ընդհանրական մշակութային գործընթացի բաղկացուցիչ, ▪ կիրառել մշակույթի մասին ստացած գիտելիքները կոնկրետ մասնագիտական ոլորտում: Համառոտ բովանդակությունը. Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: Մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, գործառնությունները և մեխանիզմները: Մշակութային գործընթացներ: Մշակույթը «անհատ», «բնություն», «հասարակություն», «էթոս», «քաղաքակրթություն» կատեգորիաների համատեքստում: Համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումները. մոտեցումներ, հարցադրումներ, օրինաչափություններ: Ժամանակակից մշակութային գործընթացները և գլոբալացման խնդիրը: Գնահատման մեթոդները և չափանիշները. Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:		

Հիմնական գրականության ցանկը.

1. Ափինյան Ա. Մշակութաբանություն, Մշակույթի տեսություն, Ե., 2008:
2. Գուրնիչ Պ. Մշակութաբանություն, Ե., 2002:
3. Մելքումյան Գ. Մշակութաբանություն, Ե., 2001:
4. Арутюнов С. А., Рыжакова С. И. Культурная антропология, М., 2004.
5. Белик А. А. Культурология. Антропологические теории культур, М., 1999.
6. Кравченко А. И. Культурология, М., 2003.
7. Розин В.М. Культурология. М., 1998.
8. Флиер А. Я. Культурология для культурологов, М., 2002.
9. Armenian Folk Arts, Culture and Identity. Bloomington and Indianapolis, Indiana Univ. Press, 2001.

2101/M	2101/M Կրոնների պատմություն	2 կրեդիտ
Շաբաթական 2 ժամ	(32/0/0)	
III կամ IV կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողների մոտ ձևավորել ընդհանուր պատկերացումներ կրոնների պատմական ձևերի, դրանց դավանաբանական և պաշտամունքային առանձնահատկությունների, հիմնական ուղղությունների մասին, ուսանողներին ծանոթացնել համաշխարհային կրոններին և Հայոց եկեղեցու դանաւաբանությանն ու տոնածիսական համակարգին, պատմության կարևոր հինախնդիրներին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա Գիտելիք և իմացություն կունենա գիտելիքներ կրոնների և Հայ եկեղեցու պատմության ձևավորման, զարգացման և դավանաբանական ու ծիսապաշտամունքային առանձնահատկությունների մասին Ունակ կլինի. ✓ (բուն մասնագիտական կարողություններ)		

• Ճանաչել, գնահատել և արժևորել արդի տարբեր կրոններն ու դրանց տարատեսակները, Հայ Առաքելական եկեղեցու պատմությունն ու դավանանքը, ✓ (ընդհանրական կարողություններ) • տալ կրոնների համակարգային վերլուծության և ընդհանրացման սահմանները:
Համառոտ բովանդակությունը «Կրոնների պատմություն» առարկան, «Կրոն հասկացությունը»: Կրոնի պատմական ձևերը, ազգային և համաշխարհային կրոններ: Ժամանակակից համաշխարհային կրոններ. բուդդայականության ծագումը, դավանաբանական և պաշտամունքային առանձնահատկությունները: Քրիստոնեության առաջացումը, դավանաբանության և պաշտամունքի ձևավորումը: Քրիստոնեության հիմնական ուղղությունները, ժամանակակից քրիստոնեությունը: Իսլամ. ծագումը, զարգացումը, դավանաբանական և պաշտամունքային առանձնահատկությունները, հիմնական ուղղությունները: Ժամանակակից կրոնական դենոմինացիաները և ներփակ հոսանքները: Քրիստոնեությունը Հայաստանում: Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնախնդիրները: Հայոց եկեղեցու դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկությունները:
Գնահատման մեթոդները և չափանիշները. • Ստուգումն անցկացվում է բանավոր, նախօրոք տրված հարցաշարի հիման վրա:
Հիմնական գրականության ցանկը 1. История религии (учеб. Под общ. Ред. И. Н. Яблокова) Т. 1-2. М., 2007. 2. Основы религиоведения (учеб. Под общ. Ред. И. Н. Яблокова) М., 2005. 3. Радугин А. А. Введение в религиоведение: теория, история и современные религии, М., 2000. 4. Религиоведение, (учеб. Под общ. Ред. М. М. Шахнович), СПб, 2007. 5. Классики мирового религиоведения. Антология. Т.1, М. 1996. 6. Մաղաքիա արք. Օրմանյան, Ազապատում, հ. Ա-Գ, Երևան, 2001: 7. Քրիստոնյա Հայաստան: Հանրագիտարան, Երևան, 2002,

2301/B01	Համակարգչից օգտվելու հմտություններ	2 կրեդիտ
Շաբաթական 2 ժամ	8/24/0	
I կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ համա-		

կարգիչների, դրանց տեխնիկական, ծրագրային և ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <i>Գիտելիք և իմացություն</i> ▪ համակարգչի կառուցվածքից և նրա աշխատանքի հիմնական սկզբունքներից, ▪ օպերացիոն համակարգից, բազմախնդրայնությունից, տեքստային և գրաֆիկական խմբագիրների աշխատանքների սկզբունքների տարբերությունից: <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) ▪ ինքնուրույն կատարել իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, գեկուցումների համար սլայդների պատրաստում և այլն): ✓ (ընդհանրական կարողություններ) ▪ ստեղծագործաբար կիրառել ունեցած գիտելիքները առկա խնդիրները լուծելիս:
<i>Համառոտ բովանդակությունը</i> Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Օպերացիոն համակարգի հասկացություն և բազմախնդրայնության գաղափար: Windows օպերացիոն համակարգի գրաֆիկական ինտերֆեյսի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: Microsoft Word փաստաթղթի ստեղծում և ձևավորում: Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ: Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:
<i>Գնահատման մեթոդները և չափանիշները</i> ▪ Դասընթացն ավարտվում է ստուգաբով, որն անցկացվում է համակարգչի վրա: Ուսանողին տրվում են հանձնարարություններ, որոնք հիմնված են դասընթացի ընթացքում անցած թեմաների վրա:
<i>Հիմնական գրականության ցանկը</i>

1. Katherine Murray, *First Look Microsoft Office 2007*, Microsoft Press, 2006
2. Ю. Стоцкий, А. Васильев, И. Телина, *Microsoft Office 2010*, Питер, 2010
3. Ю. Стоцкий, *Office 2007*, Питер, 2007
4. Առաջադրանքներ՝ էլեկտրոնային կրիչով:

0708/B01	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
1-ին կամ 2-րդ կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ձևավորել Էկոլոգիական աշխարհայացք՝ ուսանողներին ծանոթացնելով Էկոլոգիա գիտության պատմությանը, բնական համակարգերի կազմավորմանը, կենսահամակարգերի գործունեության հիմունքներին, բնության և դրա առանձին բաղադրիչների վրա անթրոպոգեն ազդեցության հետևանքներին, պոպուլյացիոն Էկոլոգիային, կենսացենոզների բնութագրին, Էկոհամակարգերի գործունեության սկզբունքներին, կենսաբազմազանության պահպանության հիմունքներին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> - Էկոլոգիայի որպես գիտության ձևավորման, կենդանիների և բույսերի Էկոլոգիայի, Էկոհամակարգի, կենսացենոզի և նոոսֆերայի ուսմունքների, մարդկության կայուն զարգացման սկզբունքների մասին: <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) - Էկոլոգիայի հիմունքներ առարկայից ստացած տեսական գիտելիքները օգտագործել բնության պահպանության բնագավառում կիրառվող բնապահպանական միջոցառումները ճիշտ վերլուծելու և կիրառելու:		

գործընթացներում,

✓ (ընդհանրական կարողություններ)

- վերլուծություններ կատարել էկոլոգիական վիճակի մասին և կատարել համապատասխան եզրակացություններ:

Համառոտ բովանդակությունը

Էկոլոգիա և նրա կայացման պատմությունը: Օրգանիզմի և միջավայրի միջև պոխազդեցությունները: Պոպուլյացիաների էկոլոգիա: Համակեցություններ: Նյութերի երկրաբանական և կենսաբանական շրջապտույտը: Կենսոլորտ: Կենսոլորտի էվոլյուցիայի հիմնական ուղղությունները: Անթրոպոգեն էկոհամակարգեր: Անթրոպոգեն ազդեցությունները մթնոլորտի, կլիմայի, ջրոլորտի և քարոլորտի վրա: Բնության պահպանության և ռացիոնալ բնօգտագործման հիմնական սկզբունքները: Էկոլոգիա և մարդու առողջությունը: Էկոլոգիական իրավունքի հիմունքները: Միջազգային համագործակցությունը էկոլոգիայի շրջանակներում: Բնության պահպանություն և գլոբալիզացիա:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգաքթին տրվում է առավելագույնը 3 հարց, նախապես տրված հարցաշարից:

Հիմնական գրականության ցանկը

1. Գրիգորյան Կ.Վ. և ուրիշներ, Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, Եր.: Զանգակ – 97, 2010.
2. Մարտիրոսյան Մ., Գրիգորյան Կ.Վ., Եսայան Ա.Հ. Բնապահպանություն և աստվածաբանություն, Վաղարշապատ, 2007.
3. Маврищев В.В. Основы общей экологии, Минск, 2000.
4. Демина Т.А. Экология, природопользование, охрана окружающей среды, “Аспект пресс”, М., 2000.

5. Воронцов Н.Н. и др. Эволюция органического мира, М., 2000.
6. Воронков Н.А. Основы общей экологии, “Агар”, М, 1999.
7. Гирусов Э.В. и др. Экология и экономика природопользования, М., 1998.
8. Грант В. эволюционный процесс, “Мир”, М., 1989.
9. Бигон М. и др. Экология, “Мир”, М., 1989.
10. Одум Ю. Основы экологии, “Мир”, М., 1975.

0101/B01	Մաթեմատիկա - 1	6 կրեդիտ
6 ժամ	48/48/0	
I կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ զարգացնել վերլուծական երկրաչափության և հանրահաշվի դպրոցական դասընթացի ընթացքում ստացած գիտելիքները և դաստիարակել հմտություններ աշխարհագրության մեջ դրանք կիրառելու համար:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> ▪ կիմանա կորդինատների մեթոդը, վերլուծական երկրաչափությունը հարթության վրա, <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) ▪ կհասկանա վերլուծական երկրաչափությունը տարածության մեջ, ✓ (ընդհանրական կարողություններ) ▪ կծանոթանա գծային հավասարումների համակարգերի լուծման մեթոդներին:		
Համառոտ բովանդակություն Կորդինատների մեթոդը: Ուղիղ գիծը հարթության վրա: Երկրորդ կարգի կորեր: Վեկտորներ: Ուղիղ գիծը տարածության մեջ: Հարթության հավասարումը: Մակերևույթի տեսություն:		

<i>Գնահատման մեթոդները և չափանիշները</i> Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Որպես կանոն՝ յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց: Ստուգման ձևերն են. 1-ին ստուգում. Բանավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0.5 է: 2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք: Միավորների քայլը 0.5 է:
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Միքայելյան Գ.Վ., Միքայելյան Զ.Ս. «Մաթեմատիկական մեթոդներ բնագիտության մեջ» 2. Сашнер Математика для географов 3. Архипов и др. Математические методы в географии

0101/B02	Մաթեմատիկա - 2	6 կրեդիտ
6 ժամ	48/48/0	
I I կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ զարգացնել մաթեմատիկական անալիզի և հավանականությունների տեսության դպրոցական դասընթացի ընթացքում ստացած գիտելիքները և դաստիարակել հմտություններ դրանք աշխարհագրության մեջ կիրառելու համար:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա Գիտելիք և իմացություն ▪ կիմանա անընդհատ ֆունկցիաների հիմնական հատկությունները: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> ▪ կհասկանա դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվի հիմնական գաղափարները և կկարողանա աշխատել դրանց հետ, ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> ▪ կծանոթանա սահմանների տեսության հետ:		

Համառոտ բովանդակությունը Մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդը: Հաջորդական սահման: Ֆունկցիայի սահման: Ֆունկցիայի անընդհատությունը: Ֆունկցիայի ածանցյալ: Անորոշ և որոշյալ ինտեգրալ: Դիֆերենցիալ հավասարումներ: Թվային շարքեր: Հավանականությունների տեսության տարրերը:
Գնահատման մեթոդները և չափանիշները - Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է: - Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, որից 2 հարցը՝ 2-ական միավոր, 2 հարցը՝ 3-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:
Հիմնական գրականության ցանկը - Միքայելյան Գ.Վ., Միքայելյան Զ.Ս. «Մաթեմատիկական մեթոդներ բնագիտության մեջ» - Сашнер Математика для географов - Архипов и др. Математические методы в географии

0410/B03	Ֆիզիկա	4 կրեդիտ
Շաբաթական 4 ժամ	32/0/32	
III կիսամյակ	Ստուգաթք	
Դասընթացի նպատակն է ծանոթացնել ֆիզիկայի և ջերմադինամիկայի հիմնական օրենքներին, դրանց առնչվող հիմնական փորձերին, ներկայացնել այդ օրենքները դիֆերենցիալ և ինտեգրալային տեսքերով, գաղափար տալ նրանց հիմնական կիրառությունների մասին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա Գիտելիք և իմացություն		

- կիմանա մեխանիկայի, մոլեկուլյար ֆիզիկայի և ջերմադինամիկայի հիմնական օրենքները, դրանց առնչվող կարևորագույն փորձերը, երևույթները,

Ունակ կլինի

✓ (բուն մասնագիտական կարողություններ)

- կհասկանա այդ երևույթների, փորձերի, օրենքների կապը, օրենքների համակարգի ներքին տրամաբանությունը, այդ համակարգից բխող հիմնական հետևությունները և արդյունքները,

✓ (ընդհանրական կարողություններ)

- կկարողանա ստացած գիտելիքները կիրառել կոնկրետ բնույթ կրող հարցերի վերլուծության, խնդիրների լուծման համար:

Համառոտ բովանդակությունը

Նյութական կետի կինեմատիկա: Նյութական կետի և կետերի համակարգի դինամիկա: Աշխատանքը և պահպանման օրենքները: Հաշվարկի ինտեգրալ և ոչ ինտեգրալ համակարգեր: Պինդ մարմնի մեխանիկա: Հոծ միջավայրի մեխանիկա: Տատանումներ և ալիքներ: Մոլեկուլային և վիճակագրական ֆիզիկայի հիմունքները:

Գնահատման մեթոդները և չափանիշները

- Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Որպես կանոն՝ յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց: Ստուգման ձևերն են.
- 1-ին ստուգում. Բանավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0.5 է:
- 2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք: Միավորների քայլը 0.5 է :

Հիմնական գրականության ցանկը

0901/B04	Երկրագիտություն	2 կրեդիտ
Շաբաթական 2 ժամ	32/0/0	

I կիսամյակ	Քննություն
	Դասընթացի նպատակն է Երկիր մոլորակի աշխարհագրական թաղանթի ճանաչումը, որպես ամբողջական բնական համակարգ, ինչպես նաև նրա կառուցվածքի ու զարգացման, բնական համակարգերի զարգացման օրինաչափությունների բացահայտումը: Աշխարհագրական թաղանթի մասն է կազմում աշխարհագրական միջավայրը, որը շրջապատում է մարդուն և որի հետ մարդկային հասարակությունը կապված է իր կյանքով ու արտադրական գործունեությամբ:
	Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <i>Գիտելիք և իմացություն</i> ▪ գաղափար կկազմի աշխարհագրական թաղանթի կոմպոնենտային և տարածքային բաղադրիչների մասին, <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> ▪ կհասկանա աշխարհագրական թաղանթի բնական բաղադրիչների ընդհանուր օրինաչափությունները և տարածաժամանակային կազմակերպման առանձնահատկությունները, ինչպես նաև թաղանթի ներսում նյութի, էներգիայի ու ինֆորմացիայի շրջապտույտի էությունը և դրա հետևանքները: ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> ▪ կկարողանա ստացած գիտելիքները կիրառել աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող բնական երևույթների ընթացքը բացատրելու և բնապահպանական բազմաթիվ հիմնախնդիրներ լուծելու համար:
	<i>Համառոտ բովանդակությունը</i> Ընդհանուր երկրագիտության ուսունասիրության առարկան, տեղը գիտությունների դասակարգման համակարգում, նրա կառուցվածքը, ուսումնասիրության մեթոդները և արդի խնդիրները: Երկրի ընդհանուր ձևաբանությունը:

Երկրի ձևը, մեծությունը, ոլորտային կառուցվածքը: Երկրի խտությունը, մագնիսականությունը, ծանրահակ ուժը: Ոլորտների քիմիական կազմը: Աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշները և դրանց փոխադարձ կապը և փոխալայմանավորվածությունը: Աշխարհագրական թաղանթի դինամիկան: Նյութերի և էներգիայի շրջապտույտները աշխարհագրական թաղանթում: Աշխարհագրական թաղանթի ռիթմիկ երևույթներ: Օրեկան, տարեկան, բազմամյա ռիթմեր: Կենսաբանական ռիթմերը լանդշաֆտներում: Մարդու և աշխարհագրական թաղանթի փոխհարաբերությունները: Բնության ռացիոնալ օգտագործման և պահպանության հիմնախնդիրները:

Գնահատման մեթոդները և չափանիշները

- Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:
- Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, որից 2 հարցը՝ 2-ական միավոր, 2 հարցը՝ 3-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

4. Калесник С.В. Основы общего землеведения М., 1955.
5. Милков Ф.Н. Ландшафтная сфера земли М., 1970.
6. Марков К.К., Добродеев О.П., Силгонов Ю.Г., Суетова И.А. Ведение в физическую географию, М., 1978.

0903/B05	Տեղագրություն գեոդեզիայի հիմունքներով	6 կրեդիտ
Շաբաթական 6 ժամ	48/0/48	
I կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գեոդեզիական բոլոր տեսակի չափումների կատարման, այդ չափումների ժամանակ օգտագործվող գոր-		

ծիքների, ինչպես նաև չափումների արդյունքների մշակման մեթոդների մասին պատշաճ մասնագիտական պատկերացում:
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <i>Գիտելիք և իմացություն</i> - կիմանա երկրի մակերևույթի համեմատաբար փոքր տեղամասերը հարթության վրա պատկերելու ձևերն ու եղանակները, <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> - կհասկանա վերը նշված պատկերման համար տեղավայրում հատուկ գործիքների ու սարքերի օգնությամբ իրականացվող գծային ու անկյունային չափումները ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> - կկարողանա գնահատել չափումների արդյունքները, մշակել ու կազմել տարբեր մասշտաբի հատակագծեր ու քարտեզներ:
<i>Համառոտ բովանդակությունը</i> Հանույթի աշխատանքային հիմնավորման ստեղծումը և նրա կապակցումը պետական գեոդեզիական ցանցին: Տարբեր հանույթային աշխատանքների համար օգտագործվող գործիքներն ու սարքերը, նրանց ստուգումները: Կախված տարածքի չափերից, բնույթից, հանույթի նպատակից, վայրի տեղագրական և կլիմայական պայմաններից հանույթի եղանակի ընտրությունը, իրականացումը և աշխատանքների ճշտության գնահատումը: Հատակագծի կազմում և ձևավորում: Նախագծի տեղափոխում հատակագծից բնության մեջ:
<i>Գնահատման մեթոդները և չափանիշները</i> - Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է: - Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, որից 2 հարցը՝ 2-ական միավոր, 2 հարցը՝ 3-

ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:
Հիմնական գրականության ցանկը 1. Шилов П.И., Федоров В.И. Инженерная геодезия и аэрогеодезия. 1971 2. Господинов Г.В., Сорокин В.Н. Топография. М., МГУ, 1977 3. Մանուշարյան Լ.Ն. Գեոդեզիա, «Լույս», Երևան, 1974 4. Левицкий И.Ю., Евлевская Я.В. Решение задач по географическим картам. М.: Просвещение, 1992 5. Խաչատրյան Մ.Մ. Տոպոգրաֆիայի հիմունքներ, ԵՊՀ հրատարակչ., Երևան, 1974

0903/ B06	Կադաստրային գործի ներածություն	2 կրեդիտ
Շաբաթական 2 ժամ	24/8/0	
I կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել անշարժ գույքի և հողային կադաստրի վարման վերաբերյալ, ինչպես նաև հողի և անշարժ գույքի արդյունավետ օգտագործման նպատակով ժամանակակից տեխնոլոգիական ծրագրերի ու մեթոդների վերաբերյալ պատշաճ մասնագիտական պատկերացում:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա Գիտելիք և իմացություն - կիմանա անշարժ գույքի և հողի, հողային հարաբերությունների, ՀՀ սահմանադրության, հողային օրենսգրքի և ՀՀ կառավարության որոշումների մասին, Ունակ կլինի ✓ (բուն մասնագիտական կարողություններ) - կհասկանա անշարժ գույքի և հողային կադաստրի դերն ու նշանակությունը, նրանց բաղադրիչ մասերի վարումը, տեղեկությունների ստացումը, մշակումը և խմբավորումը,		

✓ (ընդհանրական կարողություններ) կկարողանա իրականացնել սեփականության իրավունքի գրանցում, հաշվառում և գնահատում, ինչպես նաև կիրառել կադաստրի տվյալները հողային հարաբերությունների կարգավորման, հողային հարկի, վարձակալության և այլ բնագավառներում:
Համառոտ բովանդակությունը Կադաստրի ընդհանուր հասկացությունը և բովանդակությունը, հիմնական հողային հարաբերությունները, հողային կադաստրի բաղադրիչ մասերը և նրանց վարման կազմակերպումը: Հանրապետության հողային ֆոնդը որպես հողային կադաստրի օբյեկտ, հողային ռեսուրսների կառավարման տնտեսական հիմքերը և մեխանիզմները: Անշարժ գույքի օբյեկտների հասկացությունը և դասակարգումը, հողային շուկայի ձևավորումը և գործողությունը: Անշարժ գույքի և հողամասերի գնահատման մեթոդները, տեղեկատվական համակարգի ստեղծումը և զարգացումը:
Գնահատման մեթոդները և չափանիշները - Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Որպես կանոն՝ յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց: Ստուգման ձևերն են. 1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է: 2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:
Հիմնական գրականության ցանկը - Հողային օրենսգիրք - Քաղաքացիական օրենսգիրք - Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենքը - Հրահանգ անշարժ գույքի չափագրման /հաշվառման/. ՀՀ ԿԱ ԳԱԿ ՊԿ նախագահի 20.10.2011 թ. # 283-Ն հրաման - Անշարժ գույքի գնահատման գործունեության գրանցման մասին ՀՀ օրենքը - Գույքահարկի մասին ՀՀ օրենք - ՀՀ անշարժ գույքի ծածկագրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 17.02.1998 թ. # 91 որոշում:

0903/ B07	Գեոինֆորմատիկա և գեոինֆորմացիոն քարտեզագրության ներածություն	4 կրեդիտ
Շաբաթական 5 ժամ	40/0/40	
I I կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տեսական և կիրառական գիտելիքներ քարտեզագրության և ժամանակակից տեխնոլոգիաների, ինչպես նաև ժամանակակից գեոինֆորմացիոն քարտեզագրման, նրա խնդիրների և մեթոդների վերաբերյալ:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա Գիտելիք և իմացություն ▪ կիմանա երկրատեղեկատվական քարտեզագրման նորագույն տեխնոլոգիաները, Ունակ կլինի ✓ (բուն մասնագիտական կարողություններ) ▪ կկարողանա կիրառական նպատակով նախագծել և ստեղծել քարտեզագրական հենք և տվյալների բանկ, ✓ (ընդհանրական կարողություններ) ▪ կհասկանա կառուցել տվյալների տարածակորդինատային, տարածամասնակային եռաչափ մոդելներ:		
Համառոտ բովանդակությունը Երկրատեղեկատվական քարտեզագրման հիմնական դրույթները և խնդիրները: Երկրատեղեկատվական համակարգերի, տեխնոլոգիաների, երկրատեղեկատվական քարտեզագրման փոխազդեցությունը: Երկրատեղեկատվական քարտեզագրության մեթոդները: Տարածական մոդելավորում և ինտերպոլյացիա:		

Գնահատման մեթոդները և չափանիշները ▪ Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է: ▪ Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, որից 2 հարցը՝ 2-ական միավոր, 2 հարցը՝ 3-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:
Հիմնական գրականության ցանկը 1. Бердников К.В., Тикунов В.С. Данные, информация, знания в картографии и геоинформатике. Изв.Рус.Геогр. общества 1992 т.124. вып.4. с.369-374. 2. Берлянт А.М., Сербенюк С.Н., Тикунов В.С. Принципы и методика использования географических карт для формирования банка данных. В книге Банки географический данных для тематического картографирования. М.Изд-во МГУ 1987, с.38-47 3. Берлянт А.М., Геоинформационное картографирование – В кн: Картография и геоинформатика. Итоги наук и техники, сер. Картография. М. ВИНТИ АН СССР, 1991, т.14, с.80-117 4. Кошкарев А.В., Картография и геоинформатика: пути взаимодействия. Изв АН СССР; 1990 N1, с.27-37

0903/ B08	Երկրաչափական նիվելիրացում	4 կրեդիտ
Շաբաթական 5 ժամ	40/0/40	
I I կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել նիվելիրացման աշխատանքների, օգտագործվող սարքերի ու գործիքների և կատարման եղանակների վերաբերյալ պատշաճ մասնագիտական պատկերացում:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա Գիտելիք և իմացություն		

պատկերացում կունենա տարբեր դասերի նիվելիրացումների կատարման ժամանակ կիրառվող մեթոդների ու գործիքների մասին, Ունակ կլինի ✓ (բուն մասնագիտական կարողություններ) - կիմանա նիվելիրների, նրանց կառուցվածքաին տարբերությունների մասին և կկարողանա հաշվի առնել տարբեր բնույթի սխալների ազդեցությունը նիվելիրացման վրա, ✓ (ընդհանրական կարողություններ) - կկարողանա կառուցել երկայնական պրոֆիլ:
Համառոտ բովանդակությունը Նիվելիրացումների տեսակները, նիվելիրների կառուցվածքը, ստուգումները և աշխատանքը: Նիվելիրացումների բաժանումը դասերի, ռեպերների և դրոշմանիշեր, նիվելիրացման ստուգումը կայանում և ամբողջ ծրագծում, նիվելիրային ընթացքի կապակցումը պետական գեոդեզիական հիմքին: Նիվելիրացման մատյան, մատյանի մշակումը և պիկետների նիշերի հաշվումը: Երկայնական պրոֆիլի կառուցումը, կարմիր և աշխատանքային նիշերի հաշվումը, լայնական պրոֆիլների կազմումը: Պիկետաժի նշահարումը բնության մեջ, կորի գլխավոր կետերի նշահարումը և պիկետաժային արժեքների որոշումը, շրջանային կորերի մանրամասնիկային նշահարումը: Թեմա 6՝ Մակերևույթի նիվելիրացում, ջրհավաք մակերեսների որոշումը:
Գնահատման մեթոդները և չափանիշները - Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է: - Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, որից 2 հարցը՝ 2-ական միավոր, 2 հարցը՝ 3-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:
Հիմնական գրականության ցանկը

1. Մանուչարյան Լ.Ն. Գեոդեզիա, «Լույս», Երևան, 1974
2. Խաչատրյան Մ.Մ. Տոպոգրաֆիայի հիմունքներ, ԵՊՀ հրատարակչ., Երևան, 1974
3. Բաբայան Հ.Ա., Մեթանջյան Վ.Ա. Տեղագրության պրակտիկում գեոդեզիայի հիմունքներով, ԵՊՀ հրատարակչ., Երևան, 1991
4. Топография с основани геодезии / Под.ред. А.С.Харченко, А.П.Божок. М.: Высшая школа, 1986

0903/ B09	Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով	2 կրեդիտ
Շաբաթական 2 ժամ	24/8/0	
I I I կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել լանդշաֆտային թաղանթի “հայելին” հանդիսացող հողի ձևավորման գործոնների, կազմի, հատկությունների, բերրիության և աշխարհագրական տեղաբաշխման մասին պատշաճ մասնագիտական պատկերացումներ:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա Գիտելիք և իմացություն ▪ կիմանա հողագոյացման պրոցեսի բովանդակությունը, հողի ծագումնաբանական առանձնահատկությունները, Ունակ կլինի ✓ (բուն մասնագիտական կարողություններ) ▪ կունենա գիտելիքներ հողի կազմի, հատկությունների, բերրիության և աշխարհագրական տեղաբաշխման մասին, ✓ (ընդհանրական կարողություններ)		

կկարողանա կատարել հողագիտական դաշտային աշխատանքներ, հողերի ախտորոշում, ծագումնաբանական հորիզոնների բնութագրում, հողերի քարտեզագրում:
Համառոտ բովանդակությունը Հողագոյացման գործոնները և էությունը: Հողի պինդ, հեղուկ և գազային փուլերի կազմն ու հատկությունները: Հողերի դաշտային ախտորոշումը և ծագումնաբանական հորիզոնների վերլուծությունը: Հողի բերրիության ձևավորման գործոններն ու տիպերը: Հողերի աշխարհագրություն, դասակարգում, շրջանացում, աշխարհագրական տեղաբաշխում: Հողային ռեսուրսների ժամանակակից վիճակը և հողերի պահպանությունը:
Գնահատման մեթոդները և չափանիշները - Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է: - Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, որից 2 հարցը՝ 2-ական միավոր, 2 հարցը՝ 3-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:
Հիմնական գրականության ցանկը 1. Глазовская М.А., Геннадиев А.Н. География почв с основами почвоведения: Учеб.М: Иьд-во Москв. Ун-та, 1995, 450с. 2. Глазовская М.А., Общее почвоведение и география почв : Учеб.М: Высш. Школа,1981, 400с. 3. Почвоведение: Учеб.: В 2ч. Под ред. В.А.Ковды, Б.Г.Разанова. М.:Высш.вк.1988 4. Добровольский В.В. География почв с основами почвоведения. Учебник для ВУЗ-ов. М., "Владос". 1999, 383с.

0903/B10	Տախիոմետրական հանույթ	5 կրեդիտ
Շաբաթական 4 ժամ	32/0/32	

I I I կիսամյակ	Քննություն
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տեսական և պրակտիկ գիտելիքներ՝ տեղավայրում կատարել տախեոմետրական հանույթ՝ դրա համար օգտագործելով ժամանակակից օպտիկական տախեոմետրեր և հաշվարկման նորագույն համակարգեր:	
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <i>Գիտելիք և իմացություն</i> - կիմանալան ամբողջական տեխնոլոգիան և ժամանակակից գործիքներն ու սարքերը, որոնց միջոցով կարելի է իրականացնել ցանկացած տեղավայրի տախեոմետրական հանույթը, <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) ✓ կհասկանա դաշտային չափումների արդյունքների հիման վրա կազմել տեղամասի ճշգրիտ հատակագիծը, ✓ (ընդհանրական կարողություններ) - կկարողանա տեսական և պրակտիկ գիտելիքները հմտորեն օգտագործել նյութերի մշակման նպատակով համակարգչային տեխնիկան:	
<i>Համառոտ բովանդակությունը</i> Եռանկյունաչափական նիվելիրացման մեթոդը: Թելային հեռաչափի տեսություն: Վերագանցումների հաշվման տեխնիկան: Տեխնիկական չափաձողեր և աղյուսակներ: Ուղղաձիգ շրջանի կառուցվածքը և ստուգումները: Տախեոմետ-ավտոմատներ, կիրառման առանձնահատկությունները: Տախեոմետրական հանույթի հատակագծի կազմում ռելիեֆի պատկերմամբ:	
<i>Գնահատման մեթոդները և չափանիշները</i> - Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է: - Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հար-	

ցատումսը պարունակում է 4 հարց, որից 2 հարցը՝ 2-ական միավոր, 2 հարցը՝ 3-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Մանուչարյան Լ.Ն. Գեոդեզիա, «Լույս», Երևան, 1974 2. Шилов П.И. Геодезия. Изд-во геодезич. литературы. М., 1961 3. Բաբայան Հ.Ա., Էֆենդյան Պ.Ս., Մեթանջյան Վ.Ա. Գեոդեզիա. Մաս II. Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատ., Երևան, 2009 4. Մեթանջյան Վ.Ա., Բաբայան Հ.Ա., Էֆենդյան Պ.Ս., Գեոդեզիա. Մաս I. Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատ., Երևան, 2008

0903/B11	Քարտեզագրություն	5 կրեդիտ
Շաբաթական 5 ժամ	32/0/48	
I I I կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է, ուսանողներին տալ քարտեզագրության հիմնավորված ժամանակակից մեկնաբանում, այն միևնույն ժամանակ որպես գիտության տեխնիկա և տեխնալոգիա՝ նկատի ունենալով քարտեզագրության և նորագույն տեխնոլոգիաների ինտեգրացիոն պրոցեսները:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <i>Գիտելիք և իմացություն</i> ▪ կիմանա ժամանակակից պայմաններում ընթացող գիտությունների ինտեգրացիայի մասին, որի արդյունքում տեղի է ունենում գիտությունների ակտիվ զարգացում, այդ թվում նաև քարտեզագրության, <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> ▪ կհասկանան և ձեռք կբերի կայուն գիտելիքներ նշված ինտեգրացիայի արդյունքում քարտեզագրության և քարտեզագիտության նոր ճյուղի զարգացման վերաբերյալ, ինչպիսին է երկրատեղեկատվական ժամանակակից քարտեզագրումը, ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i>		

- կկարողանա դառնալ լավ քարտեզագիր մասնագետ միայն այն դեպքում, եթե զուգակցի ժամանակակից տեխնոլոգիաները, սարքածրագրային համակարգերը քարտեզակազմողական աշխատանքների ընթացքում:

Համառոտ բովանդակությունը

Քարտեզ, քարտեզագրության տերմինները, էությունը և նրանց սահմանումները: Քարտեզագրական ժամանակակից պատկերումները: Քարտեզագրական ընդհանրացում քարտեզների և ատլասների տիպերը: Քարտեզների օգտագործման մեթոդները: Քարտեզագիտության քարտեզագրության երկրատեղեկատվական համակարգերի կարպերը: Երկրատեղատվական քարտեզագրումը և երկրատեղատվական համակարգերը որպես գիտության տեխնիկա և տեխնալոգիա: Գեոիկոնիկա և գեոիկոնոմետրիա տերմինները և նրանց սահմանումները:

Գնահատման մեթոդները և չափանիշները

- Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:
- Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, որից 2 հարցը՝ 2-ական միավոր, 2 հարցը՝ 3-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Салищев К.А. – Картоведение: Учебник 3-е изд. М. Изд. МГУ 1990
2. Берлянт А.М., Сваткова Т.Г. – Практикум по картографии и картографическому черчению. М. Изд. МГУ 1991
3. Сербенюк С.Н. – Картография и геоинформатика – их взаимодействие. М. Изд. МГУ 1990
4. Вилич Ю.С. Проектирование и составление карт. Учебник М.Недра 1987
5. Востокова А.В. – Практикум по картографии и картографическому черчению. Уч. пособие М.МГУ 1988

0903/B12	<i>ՀՀ քաղաքացիական իրավունք</i>	4 կրեդիտ
----------	--	-----------------

Շաբաթական 3 ժամ	32/16/0
I I I կիսամյակ	Քննություն
Դասընթացի նպատակն է, պարզաբանել քաղաքացիական իրավունքի էությունը, առանձնահատկությունները, քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգերը կադաստրային հարաբերությունների կանոնակարգման համար քաղաքացիաիրավական նորմերի դերն ու նշանակությունը:	
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <i>Գիտելիք և իմացություն</i> - կիմանա քաղաքացիական օրենսդրությունը, <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> - կհասկանա օրենսդրությամբ ամրագրված կառուցակարգերն օգտագործել անշարժ գույքի կապակցությամբ ծագող հարաբերությունները կարգավորելիս, ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> - կկարողանա դրանք կիրառել կոնկրետ խնդիրներ լուծելու համար:	
